



Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Ծրագիրը համաֆինանսավորվում է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից

Գործընկեր՝ ՀՀ արդարադատության նախարարություն

Իրականացնող՝ Իրավաբանների հայկական ասոցիացիա

Իրականացնող՝ Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա

Գործընկեր՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոն

Համահեղինակ՝ «Փոքր և միջին ձեռնարկատիրության համագործակցության ասոցիացիա»

Միջոցառումը համաֆինանսավորվում է «Արթուրս Աղվերան Ռեզորթ» հյուրանոցային համալիրի կողմից

«Բիզնես ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը Հայաստանում»

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա՝ ի դեմս «Իրավաբանների հայկական ասոցիացիա» և «ՓՄՁ-ների համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպությունների

Երևան,
Դեկտեմբեր 2016թ

Բովանդակություն

| | |
|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| 1) «Հարկային ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը ՀՀ-ում» | 3 |
| 2) «Մաքսային ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը ՀՀ-ում» | 9 |
| 3) «Ազատ տնտեսական մրցակցության և մենաշնորհի ոլորտում | 14 |
| առկա կոռուպցիոն ռիսկերը ՀՀ-ում» | 14 |
| 4) «Լիցենզիաների և թույլտվությունների ոլորտում առկա | 21 |
| կոռուպցիոն ռիսկերը ՀՀ-ում» | 21 |
| 5) «Պետական գնումների ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը ՀՀ-ում» | 25 |
| 6) «Պետական գույքի մասնավորեցման և գույքը գերակա հանրային շահ ճանաչելու գործընթացում առկա կոռուպցիոն ռիսկերը ՀՀ-ում» | 37 |
| 7) ՀՀ բիզնես ոլորտում առաջարկվող հակակոռուպցիոն համակարգային | 40 |
| բարեփոխումները | 40 |

1) «Հարկային ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը ՀՀ-ում».

Հարկային ոլորտում առկա կոռուպցիոն խնդիրները քննարկվել են 2016 թվականի մայիսի 28-ին և 29-ին Աղվերանում «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության, ՀՀ արդարադատության նախարարության, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հետ համատեղ, Եվրոպական միության ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ կազմակերպած «Բիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերը Հայաստանում. արձանագրված ոլորտային խնդիրները և հետագա անելիքները» խորագրով հակակոռուպցիոն աշխատաժողովի ընթացքում: Հակակոռուպցիոն աշխատաժողովին մասնակցել են 48 անձ, որից՝ 19 կին, 29 տղամարդ: Միջոցառման մասնակիցներից էին՝ ՀՀ արդարադատության փոխնախարար ***Սուրեն Քրնոյանը***, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հակակոռուպցիոն ծրագրերի համակարգող ***Նաիրա Գյուլնազարյանը***, Հայաստանում ԵՄ պատվիրակության առևտրի հարցերով պատասխանատու ***Գարեն Ազարյանը***, Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող ***Գարեն Զադոյանը***, ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի Պետական ներքին ֆինանսական հսկողության և պետական գնումների մեթոդաբանության վարչության պետ ***Սերգեյ Շահնազարյանը***, ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի Մեթոդաբանության և ծրագրերի մշակման վարչության պետ ***Արման Մանասերյանը***, ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաքսային հսկողության ծառայության պետ՝ ***Գևորգ Մադոյանը***, ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավաբանական վարչության պետ ***Արման Մնացականյանը***, ՀՀ ԿԱ ՊԵԿ Կազմակերպման և հսկողության վարչության պետի տեղակալ ***Ռազմիկ Առաքելյանը***, ՀՀ ԿԱ Հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի պետ ***Գամռ Ասատրյանը*** և փորձագետ ***Լիլիթ Խաչատրյանը***, «ՀՀ Առևտրաարդյունաբերական պալատին կից մշտապես գործող արբիտրաժային դատարան» հիմնակի գլխավոր քարտուղար ***Արմեն Ոսկանյանը***, ՀՀ արդարադատության նախարարության փորձագետ ***Նանե Հարությունյանը*** և Հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության առաջին կարգի մասնագետ ***Հայկ Կեսոյանը***, ՓՄՁ Համագործակցության Ասոցիացիայի նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կառավարման խորհրդի անդամ ***Հակոբ Ավագյանը*** և այլք:

Հարկային ոլորտում առկա կոռուպցիոն խնդիրները քննարկվել են նաև 2016 թվականի հունիսի 8-ին Վանաձորում «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հետ համատեղ, Եվրոպական միության ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ կազմակերպված «Պետական եկամուտների հավաքագրման ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը» խորագրով հակակոռուպցիոն միջոցառման ընթացքում: Հակակոռուպցիոն միջոցառմանը մասնակցել են 59 անձ, որից 30-ը՝ կին, 29-ը՝ տղամարդ: Միջոցառման մասնակիցներից էին՝ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հակակոռուպցիոն ծրագրերի համակարգող ***Նաիրա Գյուլնազարյանը***, Պետական եկամուտների կոմիտեի Կազմակերպման և

հսկողության վարչության պետի տեղակալ **Ռազմիկ Առաքելյանը**, Լոռու մարզպետի տեղակալ **Տիգրան Բաղդասյանը** և այլոք:

Հարկային ոլորտում առկա կոռուպցիոն խնդիրները ամփոփվել են *ձեկտեմբերի 29-ին և 30-ին Աղվերանում* «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության, ՀՀ արդարադատության նախարարության, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հետ համատեղ, կազմակերպված «Բիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերը Հայաստանում» խորագրով հակակոռուպցիոն ամփոփիչ աշխատաժողովի ընթացքում: Ամփոփիչ աշխատաժողովին մասնակցել են 42 անձ, որից 15-ը՝ կին, 27-ը՝ տղամարդ: Մասնակիցների շարքում էին՝ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հակակոռուպցիոն ծրագրերի համակարգող **Նաիրա Գյուլնազարյանը**, Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող **Գարեն Զարդյանը**, ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաքսային հսկողության ծառայության պետ՝ **Գևորգ Մադոյանը**, ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավաբանական վարչության պետ **Արման Մնացականյանը**, ՀՀ ԿԱ ՊԵԿ Կազմակերպման և հսկողության վարչության պետի տեղակալ **Ռազմիկ Առաքելյանը**, ՀՀ ԿԱ Հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի փորձագետ **Աննա Գրիգորյանը**, ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի աշխատակազմի Իրավաբանական վարչության պետ **Հայկ Կարապետյանը**, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության գործարար միջավայրի բարելավման վարչության պետ **Ալբերտ Բաբայանը**, ՀՀ ֆինանսների նախարարության Լիցենզավորման գործակալության խաղային գործի Լիցենզավորման բաժնի պետ **Լուսինե Հարությունյանը**, ՀՀ Արդարադատության Հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության առաջին կարգի մասնագետ **Հայկ Կետյանը** և այլոք:

«Բիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերը Հայաստանում» խորագրով հակակոռուպցիոն ամփոփիչ աշխատաժողովը հանդիսանում էր 2015 թ.-ի դեկտեմբերի 10-11-ին և 2016 թ.-ի մայիսի 28-29-ին Աղվերանում կազմակերպված «Բիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերն ու բարեխղճության հիմնախնդիրները Հայաստանում» և «Բիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերը Հայաստանում. արձանագրված ոլորտային խնդիրները և հետագա անելիքները» աշխատաժողովների շարունակությունն ու ամփոփումը:

2015 թ.-ի դեկտեմբերի 10-11-ին Աղվերանում կայացած «Բիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերն ու բարեխղճության հիմնախնդիրները Հայաստանում» խորագրով աշխատաժողովը կազմակերպվել էր ՀՀ արդարադատության նախարարության, ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից: Գործընկերներն էին «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնն ու «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը: Աշխատաժողովին մասնակցել են 49 անձ, որոնցից 33-ը՝ տղամարդ, 16-ը՝ կին: Մասնակիցների շարքում էին ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ **Սուրեն Քրնոյանը**, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար, դեսպան **Անդրեյ Սորոկինը**, Հայաստանում Եվրոպական Միության պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավարի տեղակալ **Խոսե Մարիա Մեդինա Նավարոն**, Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող **Գարեն Զարդյանը**, ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի Իրավաբանական վարչության Վարչական վարույթի բաժնի գլխավոր մասնագետ **Արսեն Հովհաննիսյանը**, ՀՀ ԿԱ

հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի պետ **Կանո Ասատրյանը**, ՀՀ ֆինանսների նախարարության Լիցենզավորման գործակալության խաղային գործի Լիցենզավորման բաժնի պետ **Լուսինե Հարությունյանը**, ՀՀ կրթության և գիտության նախարարության գլխավոր մասնագետ **Անուշ Խաչատրյանը**, ՀՀ առողջապահության նախարարության Իրավաբանական վարչության Իրավական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար **Նելլի Թովմասյանը**, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ **Մարիամ Գալստյանը**, Հայաստանի առևտրաարդյունաբերության պալատի Միջազգային համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ **Աննա Խեչոյանը** և առաջատար մասնագետ **Մարիա Թորոսյանը**, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն **Վարուժան Հոկտանյանը** և այլոք:

Խնդիրներ և առաջարկություններ

1. Հարկային մարմինների կողմից, բացի տարեկան պլանավորված ստուգումներից, իրականացվում են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ այդ թվում՝ ուսումնասիրություններ: Այս ուսումնասիրությունները, բացառությամբ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 3.1 կետով սահմանված միջոցառումների, հանդիսանում են կոռուպցիոն ռիսկ պարունակող միջոցառումներ և հիմնականում ուղղորդվում են կոռուպցիոն գործարքներով՝ ուսումնասիրության արդյունքները դրական եզրակացությամբ ներկայացնելու պատրվակով:

Առաջարկ 1. Կրճատել օպերատիվ-հետախուզական ուսումնասիրությունների քանակը, բարձրացնել որակական արդյունավետությունը և դրանց իրականացման դեպքերում տրամադրել հստակ հիմնավորումներ:

2. Հարկ վճարողները խուսափում են վարձու աշխատողներին օրենքով սահմանված կարգով գրանցել, իսկ գրանցելուց էլ խուսափում են աշխատավարձերի իրական չափերը հայտարարագրելուց: Չեն գրանցում նաև ցածր աշխատավարձ ստացող անձանց, սեզոնային աշխատանք իրականացնող, գործարքային վճարում ստացող անձանց, ինչպես նաև չվճարվող փորձաշրջան անցնող փորձնակներին:

Առաջարկ 2. Հարկային օրենսգրքով եկամտային հարկի դրույքաչափը սահմանել նախնական քննարկվող տարբերակով՝ 20% 0-ից մինչև միջին աշխատավարձ ստացողների համար: Սահմանել, ինչպես նախկինում, գոյություն ունեցող աշխատավարձի չհարկվող շեմ, որը հավասար կլինի մեր երկրում նվազագույն սպառողական զամբյուղին: Սեզոնային աշխատանք իրականացնողների համար սահմանել հստակ ֆիքսված եկամտային հարկի դրույքաչափ՝ կոնկրետ օրերի համար (օրինակ տասնօրյա բերքահավաքի համար) 5000 դրամ միանվագ եկամտային հարկ:

3. Շրջանառության հարկի ռեժիմը, լինելով այլընտրանքային հարկման ռեժիմ, ընդունելի է ակտիվ հարկատուների մեծամասնության համար, քանի որ այս հարկման ռեժիմը կանխատեսելի է, հաշվառում վարելու գործընթացը՝ դյուրին, և հնարավորինս քիչ են կոռուպցիոն ռիսկերը: Սակայն այն նախապայմաններից մեկը, որը պետք է բավարարեն տնտեսվարողները, որպեսզի կարողանան օգտվել այս հարկային ռեժիմից, դա տարեկան շրջանառության չափն է՝ ԱԱՀ-ով հարկվող-չհարկվող համարվելու շեմը: Տվյալ շեմը

չգերազանցելու համար տնտեսվարողները գնում են կոռուպցիոն մեխանիզմներով պայմանավորվածությունների՝ իրական շրջանառությունը թաքցնելով:

Առաջարկ 3. Հարկային օրենսգրքով շրջանառության հարկի ռեժիմով հարկվելու համար սահմանված շեմը վերացնել, որոշ սահմանափակ տեսակի գործունեություններ, օրինակ՝ մանրածախ առևտուրը և անմիջականորեն վերջնական սպառողներին մատուցվող ծառայությունները, հարկել շրջանառության հարկով՝ անկախ շեմից, ընդ որում՝ այլընտրանքային սկզբունքով՝ հնարավորություն տալով վերջիններիս ցանկացած պահի, իրենց դիմումով տեղափոխվել հարկման ընդհանուր կարգի ռեժիմ:

4. Հարկային տեսուչ-տնտեսվարող հարաբերություններում առկա են մեկ այլ կոռուպցիոն մեխանիզմներ, որոնք ձևավորվում են՝ հարկային ծառայողների կողմից հաշվապահական ծառայություններ առաջարկելով և մատուցելով: Նշենք, որ այս երևույթը առավել ընդգծված է ՀՀ մարզերում:

Առաջարկ 4. Տարածքային հարկային մարմիններում նմանատիպ առաջարկները արգելող ցուցանակներ տեղադրել: Հարկային ոլորտում պետական լիազոր անձանց սահմանել խիստ ծառայողական պատասխանատվության միջոցներ հարկային մարմինների ծառայողներին հաշվապահական գրասենյակների հետ փոխկապակցվածության դեպքերի առթիվ: Բացի այդ, օրենքով սահմանել հատուկ հարկային մարմինների ծառայողների համար հաշվապահական գրասենյակների հետ փոխկապակցվածության վերաբերյալ շահերի բախման հայտարարագրման պարտականություն:

5. ՀՀ-ում տարիներ շարունակ խնդրահարույց է մնում պարտադիր փաստաթղթավորման շղթայի ապահովումը: Այս հարցի վերաբերյալ տեղի են ունեցել բազմաթիվ քննարկումներ, օրենսդրական փոփոխությունների նախաձեռնություններ, սակայն մինչ այժմ չեն արձանագրվել դրական առաջընթացներ:

Խոշոր մատակարարները մեղադրում են փոքր գնորդներին փաստաթուղթ չընդունելու հարցում, փոքր տնտեսվարողները մեղադրում են *խոշոր տնտեսվարողներին, մաքսային ներմուծումներ իրականացնողներին*՝ փաստաթուղթ չտրամադրելու համար: Որպես օրինակ ներկայացնենք ՀՀ ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի աշխատաժողովների շրջանակներում ամիսներ շարունակ բարձրաձայնված հետևյալ հարցը. ՀՀ-ում գործող խոշոր սուպերմարկետների ցանցերի փոխհարաբերությունները գերփոքր բիզնեսի հետ գնորդ-մատակարար շղթայում լի է բազմաթիվ փաստաթղթային թերացումներով: Դրանք կոռուպցիոն մեխանիզմներով խոշոր տնտեսվարողների կողմից հարկերը թաքցնելու և հասույթը թերհայտարարագրելու հետևանք են, որի պատճառով շղթայական լուրջ խնդիրներ են ունենում գերփոքր բիզնեսի ներկայացուցիչները:

Խնդիրն այն է, որ փոքր բիզնեսի ներկայացուցիչները՝ հայկական ապրանք արտադրողները և ներմուծողները լուրջ խնդիրներ ունեն իրենց ապրանքները Երևանի խոշոր սուպերմարկետներին մատակարարելիս: Խոշոր սուպերմարկետների հաշվապահությունները ստիպում են փոքր բիզնեսի ներկայացուցիչներին իրենց ապրանքները մատակարարել առանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փաստաթղթերի (հաշվարկային փաստաթղթերի, հարկային հաշիվների) կամ մատակարարել մասնակի փաստաթղթավորված 60/40 կամ 20/80 հարաբերակցությամբ: Ապրանքների գնորդ-մատակարար շղթան կառուցվում է առանց պայմանագրերի, ուշացնում են ապրանքների մատակարարման դիմաց վճարումները 60 օր և ավելի ժամկետով, վճարումները կատարվում են կանխիկ՝ ըստ իրենց հարմար վայրերի և չափսերի:

Առավել մտահոգող է այն հանգամանքը, որ խոշոր սուպերմարկետների տերերը դուրս են մղում այն ապրանքները, որոնք լավ են վաճառվում, և իրենք են սկսում այդ ապրանքների նմանակները արտադրել և ավելի էժան վաճառել իրենց իսկ սուպերմարկետներում: Այս հարցը ներկայացվել է ՀՀ նախորդ վարչապետին և բերվել են կոնկրետ օրինակներ, երբ ապրիլ ամսին սուպերմարկետների մոտ իրականացվող ստուգումների ընթացքում նույն սուպերմարկետների հաշվապահները հրահանգել էին փոքր բիզնեսի մատակարարներին ապրանքները մատակարարել հաշիվ ապրանքագրերով, իսկ ստուգումն ավարտվելուց հետո՝ ստիպել վերջիններիս անվավեր ճանաչելու օրենքով սահմանված կարգով դուրս գրված հաշիվները՝ մինչ այսօր չենթարկվելով պատասխանատվության:

Այսինքն, գործ ունենք ՀՀ օրենսդրության, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված «Հարկեր, տուրքեր և պետական այլ պարտադիր վճարներ վճարելուց չարամտորեն խուսափելը» վերտառությամբ հողվածով սահմանված նորմերի չպահպանման, ինչպես նաև օրենքով սահմանված պատասխանատվության գործնական կիրառման խնդրի հետ:

Առաջարկ 5. Դիմել պատկան մարմիններին, այդ թվում՝ իրավասու, գործող օրենսդրության սահմաններում պատասխանատվության ենթարկելու այն խոշոր տնտեսվարողներին, ովքեր խուսափում են հարկերից՝ դրանով իսկ խնդիրներ առաջացնելով ՓՄՁ-ների մոտ: Այս խնդրի համար այլընտրանքային տարբերակ կարող է հանդիսանալ ազդարարների ինստիտուտի ներդրումը, որն առավել մանրամասն կարգավորված է Համակարգային բաժնի 2-րդ առաջարկությամբ:

6. ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածը հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելու դեպքում նախատեսում է քրեական պատասխանատվություն՝ տուգանքից մինչև ազատազրկում: Տվյալ հոդվածի 1-ին մասով հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվում է *հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր կամ հարկման հիմք հանդիսացող պարտադիր այլ փաստաթղթեր չներկայացնելու կամ նշված փաստաթղթերի մեջ ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով*: Իրավակիրառ պրակտիկայում խնդիրներ են առաջանում, թե որ փաստաթղթերն են համարվում պարտադիր այլ փաստաթղթեր:

Առաջարկ 6. Պարզեցնել սույն հոդվածը, ինչպես նաև սահմանել հստակ փաստաթղթերի ցանկ, որի հետևանքով կհստակեցվի նաև իրավակիրառ պրակտիկան:

7. Պրակտիկայում հաճախ են պատահում դեպքեր, երբ Առևտրի իրականացման վայրերում՝ Երևանում գործող գրեթե բոլոր տաղավարների, վաճառասեղանների, պահեստների վարձակալության պայմանագրերը կամ ընդհանրապես չեն կնքվում ՓՄՁ առևտրականների հետ՝ հարկերից խուսափելու նպատակով, կամ պայմանագրի արժեքը սահմանված է իրական վարձավճարից մի քանի անգամ պակաս:

Փոքր բիզնեսի ներկայացուցիչները գործ ունեն նաև այնպիսի առևտրի իրականացման վայրի կազմակերպիչ(ների) հետ, ովքեր հայտարարում են, որ վարձակալվող տարածքները տրամադրում են անվճար (ՀՀ գործող հարկային օրենսդրությամբ որևէ նորմ սահմանված չէ առ այն, երբ մի տնտեսվարողը մյուսին տրամադրում է անհատույց որևէ ծառայություն կամ ապրանք), սակայն վարձավճարի փոխարեն վարձակալների հետ վերանորոգման կամ մեկ այլ փոխհատուցման եղանակ հաշվանցելու պայմանավորվածություն են ձեռք բերում: Այս գործարքները ևս դուրս են մնում հաշվապահական ձևակերպումներից և հարկային դաշտից:

Առաջարկ 7. ՀՀ օրենսդրությամբ կարգավորել մի տնտեսվարողի կողմից մյուսին

անհատույց որևէ ծառայություն տրամադրելու կարգը՝ սահմանելով հստակ պայմաններ և անհրաժեշտ փաստաթղթեր, որպեսզի հնարավոր չլինի խուսափել հարկերից:

8. Այս տարվա ընթացքում ՀՀ-ում առաջին անգամ ընդունվեց մեկ միասնական հարկային օրենսգրք: Նմանատիպ օրենսդրական հիմնաքարային փոփոխություն, որը վերաբերում է բիզնես համայնքի բոլոր շերտերին և ոլորտներին, ՀՀ-ում դեռևս չի իրականացվել: Հարկային նոր օրենսգրքում մի շարք դրույթներ ենթարկվում են լուրջ փոփոխության, որոնց մասին բիզնես համայնքը պետք է լինի առավել իրազեկված, գերծ մնալու դրանց ուժի մեջ մտնելուց հետո հնարավոր ռիսկերից՝ այդ թվում կոռուպցիոն: ՀՀ Հարկային օրենսգրքը, հասարակական կառույցների և բիզնես ներկայացուցիչների կարծիքով, չի ենթարկվել բավարար չափով քննարկումների:

Առաջարկ 8. ՀՀ ֆինանսների նախարարությանը և ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին առաջարկել բիզնես շահերը ներկայացնող մասնագիտացված հասարակական կառույցների հետ համատեղ մշակել ՀՀ հարկային օրենսգրքի անվճար իրազեկման լայնածավալ մարզային, մայրաքաղաքային, ոլորտային սեմինարների անցկացման պլան և ժամանակացույց:

9. Հարկային տեսուչների կողմից ամսական թաքնված վճարներ են հավաքագրվում: ՀՀ ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի կողմից կազմակերպվող հակակոռուպցիոն միջոցառումների շրջանակում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի ներկայացուցիչների կողմից պարզաբանվեց, որ այս արատավոր երևույթը նվազեցնելու համար դեռևս 2016 թվականի մարտ ամսին ՊԵԿ նախագահի կողմից իջեցվել է հրաման, ըստ որի տեսուչները այլևս կցված չեն կոնկրետ տնտեսվարողների, սակայն հարցումները ցույց են տալիս, որ տնտեսվարողները տեղեկացված չեն այդ փոփոխության մասին, իսկ տեսուչները շարունակում են ամսական թաքնված վճարներ հավաքագրել ՓՄՁ-ներից:

Առաջարկ 9. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից իրականացնել լայնածավալ իրազեկման արշավներ այն մասին, որ տեսուչները այլևս կցված չեն կոնկրետ տնտեսվարողներին: Լայնածավալ լսարանին տեղեկատվությունը հասցնելու նպատակով՝ իրազեկման համար անհրաժեշտ է օգտագործել նաև հեռուստատեսային ալիքները:

10. Միջազգային պրակտիկան սահմանում է, որ հարկային տեսչությունները դասակարգում են ստուգվող ընկերություններին ըստ ռիսկայնության աստիճանի՝ համապատասխանաբար բարձր, միջին և ցածր խմբերում: Անհրաժեշտ է ապահովել որոշակի համամասնություն, այսինքն՝ չսահմանել, օրինակ՝ ընկերությունների 90%-ի համար բարձր ռիսկայնության աստիճան: Եթե որևէ ընկերություն ցանկանում է իմանալ, թե որ ռիսկային խմբի մեջ է դասակարգված, ապա տեսչությունը պարտավոր է տեղեկացնել նրան: Նման տեղեկատվության գաղտնի պահելը ընկերությունից հիմնավորված չէ միջազգային պրակտիկայում:

Առաջարկ 10. Առավել բարձր թափանցիկություն ապահովելու նպատակով հրապարակել ռիսկայնության խմբերի ցուցակները:

2) «Մաքսային ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը ՀՀ-ում».

*Մաքսային ոլորտում առկա կոռուպցիոն խնդիրները քննարկվել են նաև 2016 թվականի մայիսի 25-ին Գյումրիում «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հետ համատեղ, Եվրոպական միության ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ կազմակերպված «Մաքսային ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը» խորագրով հակակոռուպցիոն միջոցառման ընթացքում: Հակակոռուպցիոն աշխատաժողովին մասնակցել են 48 անձ, որից՝ 19 կին, 29 տղամարդ: Միջոցառմանը մասնակցում էին՝ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի Հակակոռուպցիոն ծրագրերի համակարգող **Նաիրա Գյուլնազարյանը**, Շիրակի տարածաշրջանային մաքսատան պետ **Կարեն Մանուկյանը**, Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի Գործարարության Աջակցության Գրասենյակի ղեկավար **Գևորգ Պողոսյանը**, Արթիկի քաղաքապետ **Արսեն Աբրահամյանը** և այլք:*

*Մաքսային ոլորտում առկա կոռուպցիոն խնդիրները քննարկվել են նաև 2016 թվականի մայիսի 28-ին և 29-ին Ադվերանում «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության, ՀՀ արդարադատության նախարարության, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հետ համատեղ, Եվրոպական միության ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ կազմակերպված «Բիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերը Հայաստանում. արձանագրված ոլորտային խնդիրները և հետագա անելիքները» խորագրով հակակոռուպցիոն աշխատաժողովի ընթացքում: Հակակոռուպցիոն աշխատաժողովին մասնակցել են 48 անձ, որից՝ 19 կին, 29 տղամարդ: Միջոցառման մասնակիցներից էին՝ ՀՀ արդարադատության փոխնախարար **Սուրեն Քրնոյանը**, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հակակոռուպցիոն ծրագրերի համակարգող **Նաիրա Գյուլնազարյանը**, Հայաստանում ԵՄ պատվիրակության առևտրի հարցերով պատասխանատու **Կարեն Ազարյանը**, Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող **Կարեն Զադոյանը**, ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի Պետական ներքին ֆինանսական հսկողության և պետական գնումների մեթոդաբանության վարչության պետ **Մերգել Շահնազարյանը**, ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի Մեթոդաբանության և ծրագրերի մշակման վարչության պետ **Արման Մանասերյանը**, ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաքսային հսկողության ծառայության պետ՝ **Գևորգ Մադոյանը**, ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավաբանական վարչության պետ **Արման Մնացականյանը**, ՀՀ ԿԱ ՊԵԿ Կազմակերպման և հսկողության վարչության պետի տեղակալ **Ռազմիկ Առաքելյանը**, ՀՀ ԿԱ Հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի պետ **Կամո Ասատրյանը** և փորձագետ **Լիլիթ Խաչատրյանը**, «ՀՀ Առևտրաարդյունաբերական պալատին կից մշտապես գործող արբիտրաժային դատարան» հիմնակի գլխավոր քարտուղար **Արմեն Ոսկանյանը**, ՀՀ արդարադատության նախարարության փորձագետ **Նանե Հարությունյանը** և Հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության առաջին կարգի մասնագետ*

Հայկ Կեսոյանը, ՓՄՁ Համագործակցության Ասոցիացիայի նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կառավարման խորհրդի անդամ **Հակոբ Ավագյանը** և այլոք:

Կոռուպցիոն խնդիրները ամփոփվել են **հոկտեմբերի 29-ին և 30-ին Աղվերանում** «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության, ՀՀ արդարադատության նախարարության, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հետ համատեղ, կազմակերպված «Բիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերը Հայաստանում» խորագրով հակակոռուպցիոն ամփոփիչ աշխատաժողովի ընթացքում: Ամփոփիչ աշխատաժողովին մասնակցել են 42 անձ, որից 15-ը՝ կին, 27-ը՝ տղամարդ: Մասնակիցների շարքում էին՝ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հակակոռուպցիոն ծրագրերի համակարգող **Նաիրա Գյուլնազարյանը**, Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող **Կարեն Չաղոյանը**, ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաքսային հսկողության ծառայության պետ՝ **Գևորգ Սաղոյանը**, ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավաբանական վարչության պետ **Արման Մնացականյանը**, ՀՀ ԿԱ ՊԵԿ Կազմակերպման և հսկողության վարչության պետի տեղակալ **Ռազմիկ Առաքելյանը**, ՀՀ ԿԱ Հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի փորձագետ **Աննա Գրիգորյանը**, ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի աշխատակազմի Իրավաբանական վարչության պետ **Հայկ Կարապետյանը**, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության գործարար միջավայրի բարելավման վարչության պետ **Ալբերտ Բաբայանը**, ՀՀ ֆինանսների նախարարության Լիցենզավորման գործակալության խաղային գործի Լիցենզավորման բաժնի պետ **Լուսինե Հարությունյանը**, ՀՀ Արդարադատության Հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության առաջին կարգի մասնագետ **Հայկ Կեսոյանը** և այլոք:

«Բիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերը Հայաստանում» խորագրով հակակոռուպցիոն ամփոփիչ աշխատաժողովը հանդիսանում էր 2015 թ.-ի դեկտեմբերի 10-11-ին և 2016 թ.-ի մայիսի 28-29-ին Աղվերանում կազմակերպված «Բիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերն ու բարեխղճության հիմնախնդիրները Հայաստանում» և «Բիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերը Հայաստանում. արձանագրված ոլորտային խնդիրները և հետագա անելիքները» աշխատաժողովների շարունակությունն ու ամփոփումը:

2015 թ.-ի դեկտեմբերի 10-11-ին Աղվերանում կայացած «Բիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերն ու բարեխղճության հիմնախնդիրները Հայաստանում» խորագրով աշխատաժողովը կազմակերպվել էր ՀՀ արդարադատության նախարարության, ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից: Գործընկերներն էին «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնն ու «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը: Աշխատաժողովին մասնակցել են 49 անձ, որոնցից 33-ը՝ տղամարդ, 16-ը՝ կին: Մասնակիցների շարքում էին ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ **Սուրեն Քրտոյանը**, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար, դեսպան **Անդրեյ Սորոկինը**, Հայաստանում Եվրոպական Միության պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավարի տեղակալ **Խոսե Մարիա Մեդինա Նավարոն**, Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող **Կարեն Չաղոյանը**, ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի Իրավաբանական վարչության Վարչական վարույթի բաժնի գլխավոր մասնագետ **Արսեն Հովհաննիսյանը**, ՀՀ ԿԱ հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի պետ **Կառն Ասատրյանը**, ՀՀ ֆինանսների

նախարարության Լիցենզավորման գործակալության խաղային գործի Լիցենզավորման բաժնի պետ **Լուսինե Հարությունյանը**, ՀՀ կրթության և գիտության նախարարության գլխավոր մասնագետ **Անուշ Խաչատրյանը**, ՀՀ առողջապահության նախարարության Իրավաբանական վարչության Իրավական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար **Նեյի Թովմասյանը**, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ **Մարիամ Գալստյանը**, Հայաստանի առևտրաարդյունաբերության պալատի Միջազգային համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ **Աննա Խեչոյանը** և առաջատար մասնագետ **Մարիա Թորոսյանը**, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն **Վարուժան Հոկտանյանը** և այլոք:

Խնդիրներ և առաջարկություններ

1) Մաքսային ներմուծումներ իրականացնող միջնորդ կազմակերպությունները (կարգոները)՝ որպես բեռնափոխադրում իրականացնող կազմակերպություններ, տնտեսվարողներին առաջարկում են նաև մաքսային ձևակերպումներ իրականացնելու ծառայություններ, ինչը լուրջ խնդիր է առաջացնում մեր երկրում փաստաթղթավորման շղթայում: Ներմուծված ապրանքների մեծամասնությունը այս մեխանիզմով դուրս են մնում փաստաթղթավորման շղթայի սկզբնաղբյուրում՝ երկրի սահմաններից ներս մտնելիս՝ դրանով իսկ խաթարելով տնտեսության ներսում ապրանքների պարտադիր փաստաթղթավորման կարևոր դրույթը:

Առաջարկ 1. ՊԵԿ-ՓՄՁ-ՔԶԿ համագործակցության միջոցով սահմանափակել ներմուծում իրականացնող միջնորդ կազմակերպությունների (կարգոների) գործունեությունը՝ արգելելով վերջիններիս ներմուծողների անունից արտահանման և ներմուծման ձևակերպումներն իրականացնել իրենց անունով: Այդ կազմակերպությունների իրավասությունների շրջանակում թողնել միայն հավաքական բեռների տեղափոխման կազմակերպումը՝ բացառելով «կոծկված» ներմուծումները:

2) Տնտեսվարող սուբյեկտները բարձրացնում են այն հարցը, որ բավարար չափով իրազեկված չեն մաքսային մարմիններ այս կամ այն դեպքով ներկայացվելիք անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի, մաքսազերծման արժեքի ձևավորման նախնական հաշվարկների և այլ տեղեկատվության հետ: Բացի այդ, ՀՀ-ի ԵԱՏՄ մտնելուն ընդառաջ՝ ներմուծողների և այդ տարածք ապրանքներ արտահանողների համար իրազեկման խնդիրներ առաջացան, սակայն մինչ այժմ չեն իրականացվել լայնածավալ իրազեկման արշավներ վերոնշյալ ուղղությամբ: Բացի այդ, մի շարք իրավական ակտեր հասանելի չեն ՀՀ պետական լեզվով թարգմանությամբ: Հարկ է նաև նշել, որ տնտեսվարող սուբյեկտներից շատերը իրազեկ չեն «լիազորված տնտեսական օպերատորի» կարգավիճակով տրվող արտոնությունների մասին:

Առաջարկ 2. Բիզնես միջավայրի զարգացման համար ստեղծել տեղեկատվական համակարգ (պորտալ), որի միջոցով անձինք կկարողանան նախօրոք ծանոթանալ մաքսային մարմիններ այս կամ այն դեպքով ներկայացվելիք անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի հետ: Նշված առցանց համակարգում հարկավոր է տեղադրել նաև մաքսազերծման արժեքի, ինչպես նաև այլ կարևոր հարցերի վերաբերյալ տեղեկատվություն, այդ թվում՝ ՀՀ ներմուծված առավել զգայուն ապրանքների մաքսային արժեքների վերաբերյալ նվազագույնը 3-ամսյա վիճակագրական տվյալներ:

Առաջարկ 3. Ստեղծել էլեկտրոնային համակարգ, որի միջոցով հնարավոր կլինի կատարել մաքսային արժեքների ձևավորման նախնական հաշվարկներ, ինչպես նաև դրանից բխող մաքսային վճարների կանխատեսումներ:

Առաջարկ 4. Թարգմանել հայերեն լեզվով ԵԱՏՄ մաքսային օրենսդրությանը վերաբերող իրավական ակտերը, ինչպես նաև դրանցից բխող տեխնիկական կանոնակարգերը և իրականացնել լայնածավալ իրազեկման արշավներ վերջիններիս վերաբերյալ, ինչպես նաև կազմել վերոնշյալի վերաբերյալ իրազեկման ուղեցույցներ:

Առաջարկ 5. ՊԵԿ-ի և ՔՀԿ ներկայացուցիչների հետ համատեղ իրականացնել իրազեկման մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ և հորդորել տնտեսվարողներին օգտվել «լիազորված տնտեսական օպերատորի» կարգավիճակ ստանալու հնարավորությունից, ինչը ստեղծում է արտոնյալ պայմանների տնտեսվարողների համար:

6) Մաքսագերծումներ իրականացնելիս խնդրահարույց է մնում «Գործարքի գնի» մեթոդով մաքսային ձևակերպումների անհասանելիությունը, ինչը լի է կոռուպցիոն ռիսկերով: Մասնավորապես՝ տնտեսվարողների համար անհասկանալի է այն փաստաթղթերի ցանկն ու ձևանմուշները, որոնցով պետք է դիմեն մաքսային մարմիններին ներմուծվող ապրանքները «Գործարքի գնի» մեթոդով ձևակերպելու համար: Բացի այդ, որոշ երկրների դեպքում վերոնշյալ փաստաթղթերի ապահովումը գրեթե անհնար է:

Առաջարկ 6. Կազմել և հրապարակել՝ թե՛ էլեկտրոնային, թե՛ թղթային տարբերակներով հուշաթերթիկներ՝ «Գործարքի գնի» մեթոդով դիմելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի օրինակելի ձևերի և գործընթացի քայլերի հերթականության վերաբերյալ:

Առաջարկ 7. Մաքսային մարմինների և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կռաւիցիայի հետ համատեղ կազմել «Գործարքի գնի» մեթոդի կիրառության պարզ մեթոդաբանական ձեռնարկ խնդրահարույց, հաճախ տրվող հարցերին պարզաբանումներ տալու և լայնածավալ իրազեկում իրականացնել նպատակով:

Առաջարկ 8. Կազմել և հրապարակել՝ թե՛ էլեկտրոնային, թե՛ թղթային տարբերակներով հուշաթերթիկներ՝ կրիպտոգրաֆիկ՝ ծածկագրային տարրեր /ֆունկցիա/ պարունակող ապրանքների ԵԱՏՄ ռեեստրում գրանցման համար ընթացակարգերի վերաբերյալ, կազմել և հրապարակել այդ ռեեստրում մինչ այժմ չգրանցված, սակայն ՀՀ տարածք ներմուծվող ապրանքների գրանցման ուղեցույցներ:

Առաջարկ 9. Մաքսային ձևակերպումների ընթացքում սակագնային կարգավորման կամ սահմանափակումների ենթակա ապրանքների ներմուծման կամ արտահանման ժամանակ ներմուծողի կամ արտահանողի պահանջի դեպքում գրավոր հիմնավորել պահանջվող փաստաթղթերի անհրաժեշտությունը՝ նշելով այն նորմատիվ իրավական ակտերը, որոնցով վերջինս կարգավորվում է:

Առաջարկ 10. ՊԵԿ և ՔՀԿ ներկայացուցիչների հետ համատեղ ստեղծել աշխատանքային խումբ՝ ուսումնասիրելու այն երկրներից ներմուծվող ապրանքների խնդիրները, որտեղից «Գործարքի գնի» մեթոդի կիրառման համար անհրաժեշտ փաստաթղթերի ապահովումը գրեթե անհնար է և տվյալ հարցի լուծման համար ձևավորել համատեղ առաջարկ:

Առաջարկ 11. Առկա կոռուպցիոն խնդիրների լուծման նպատակով ստեղծել «Գործարքի գնի» մեթոդի կիրառման/կատարման և արագ արձագանքման խումբ՝ ՀՀ վարչապետի գործարար միջավայրի, հարկային և մաքսային, ներդրումների, ֆինանսական համակարգի ոլորտներում խորհրդական՝ Ալեքսանդր Խաչատուրյանի ներգրավմամբ, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի

ներկայացուցիչների և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի առնվազն երեք անդամի մասնակցությամբ:

12) Մաքսային մարմինների կողմից հաճախ խախտվում է վարչարարության հիմնական սկզբունքներից մեկը՝ կամայականության արգելքի սկզբունքը, և որոշ պաշտոնատար անձինք սուբյեկտիվ որոշումներ են ընդունում այս կամ այն դեպքում անհրաժեշտ փաստաթղթերի հետ կապված, քանի որ տնտեսավարողներն, հատկապես՝ ՓՄՁ ներկայացուցիչներն, տեղյակ չեն, թե օրենքով կոնկրետ ինչ թույլտվությունների և նմանատիպ այլ փաստաթղթերի ներկայացում է պահանջվում:

Առաջարկ 12. ՀՀ ԿԱ ՊԵԿ կայքում հրապարակել, թե կոնկրետ որ դեպքերում են անհրաժեշտ ներկայացնել տարատեսակ թույլտվություններ, եզրակացություններ ու նմանատիպ այլ փաստաթղթեր:

13) Շատ տնտեսավարող սուբյեկտներ բարձրացնում են խնդիրներ առ այն, որ մաքսային մարմինները ծանրաբեռնում են տարաբնույթ փաստաթղթերի տրամադրման պահանջով այն դեպքում, որ այդ փաստաթղթերը վերջիններս կարող են առավել հասանելի կերպով ձեռք բերել մաքսային մարմինների կամ այլ պետական մարմինների տեղեկատվական բազաներից:

Առաջարկ 13. Առաջարկվում է մաքսային ձևակերպումների շրջանակներում տնտեսավարող սուբյեկտներից մաքսային օրենսդրությամբ սահմանված արգելքների, սահմանափակումների, ոչ սակագնային կարգավորման միջոցների պահպանման նպատակով փաստաթղթեր չպահանջել այն դեպքերում, ***եթե*** այդ փաստաթղթերը մաքսային մարմինների կողմից կարող են ստացվել մաքսային մարմինների կամ այլ պետական մարմինների տեղեկատվական բազաներից: Այսինքն, վերոնշյալ դեպքերում տվյալ փաստը հաստատելու համար պահանջվող տեղեկանքի ապահովման բեռը թողնել մաքսային մարմինների ուսերին:

14) Խնդիրներ են առաջանում այն անձանց համար, ովքեր ինքնահայտարարագրում են փորձում իրականացնել ինքնուրույն, օրինակ՝ համակարգը թույլ չի տալիս մուտք գործել, ինչի հետևանքով վերոնշյալ անձինք ստիպված են լինում դիմել միջնորդների ծառայություններին:

Առաջարկ 14. ՀՀ կառավարությանը հնարավորինս սեղմ ժամկետներում սահմանել մաքսային հայտարարագրման ավտոմատ համակարգ մուտք գործելու կարգը, որն ուղղակիորեն բխում է «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 158-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջից:

15) Մաքսային հայտարարագրերում չափազանց փոքր շեղումների առկայության հայտնաբերման դեպքում ևս կիրառվում է վարչական պատասխանատվություն, և փաստորեն տնտեսավարող սուբյեկտը չնչին սխալի պատճառով, որն էական ազդեցություն չի ունենում իր հայտարարագրի վրա, կրում է վնաս:

Առաջարկ 16. Օրենսդրորեն ամրագրել շեղումների որոշակի թույլատրելի չափ բոլոր այն դեպքերի համար, երբ հայտարարագիրը ճիշտ է լրացված՝ բացառությամբ վերոնշյալ շեղման:

Օանթագրություն.

Շեմի սահմանումը անհրաժեշտ է այն տեսանկյունից, որ *de minimis non curat praetor* սկզբունքի համաձայն (օրենքը մանրուքներով չի զբաղվում), չափազանց փոքր շեղումների համար չպետք է սահմանվի պատասխանատվություն:

3) «Ազատ տնտեսական մրցակցության և մենաշնորհի ոլորտում

առկա կոռուպցիոն ռիսկերը ՀՀ-ում».

Ազատ մրցակցության և մենաշնորհի ոլորտում առկա կոռուպցիոն խնդիրները քննարկվել են 2016 թվականի մայիսի 28-ին և 29-ին Աղվերանում «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության, ՀՀ արդարադատության նախարարության, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հետ համատեղ, Եվրոպական միության ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ կազմակերպած «Բիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերը Հայաստանում. արձանագրված ոլորտային խնդիրները և հետագա անելիքները» խորագրով հակակոռուպցիոն աշխատաժողովի ընթացքում: Հակակոռուպցիոն աշխատաժողովին մասնակցել են 48 անձ, որից՝ 19 կին, 29 տղամարդ: Միջոցառման մասնակիցներից էին՝ ՀՀ արդարադատության փոխնախարար **Սուրեն Քրմոյանը**, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հակակոռուպցիոն ծրագրերի համակարգող **Նահրա Գյուլնազարյանը**, Հայաստանում ԵՄ պատվիրակության առևտրի հարցերով պատասխանատու **Գարեն Ազարյանը**, Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող **Գարեն Զաղոյանը**, ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի Պետական ներքին ֆինանսական հսկողության և պետական գնումների մեթոդաբանության վարչության պետ **Սերգեյ Շահնազարյանը**, ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի Մեթոդաբանության և ծրագրերի մշակման վարչության պետ **Արման Մանասերյանը**, ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաքսային հսկողության ծառայության պետ՝ **Գևորգ Սաղոյանը**, ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավաբանական վարչության պետ **Արման Մնացականյանը**, ՀՀ ԿԱ ՊԵԿ Կազմակերպման և հսկողության վարչության պետի տեղակալ **Ռազմիկ Առաքելյանը**, ՀՀ ԿԱ Հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի պետ **Գամն Ասատրյանը** և փորձագետ **Լիլիթ Խաչատրյանը**, «ՀՀ Առևտրաարդյունաբերական պալատին կից մշտապես գործող արբիտրաժային դատարան» հիմնակի գլխավոր քարտուղար **Արմեն Ոսկանյանը**, ՀՀ արդարադատության նախարարության փորձագետ **Նանե Հարությունյանը** և Հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության առաջին կարգի մասնագետ **Հայկ Կեսոյանը**, ՓՄՁ Համագործակցության Ասոցիացիայի նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կառավարման խորհրդի անդամ **Հակոբ Ավագյանը** և այլք:

Ազատ տնտեսական մրցակցության և մենաշնորհի ոլորտում առկա կոռուպցիոն խնդիրները քննարկվել են նաև 2016 թվականի հունիսի 22-ին Գավառում «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հետ համատեղ, Եվրոպական միության ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ կազմակերպված «Ազատ մրցակցության ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը» խորագրով հակակոռուպցիոն միջոցառման ընթացքում: Հակակոռուպցիոն միջոցառմանը մասնակցել են 44 անձ, որից 22-ը՝ կին, 22-ը՝ տղամարդ: Միջոցառման մասնակիցներից էին՝ Գեղարքունիքի մարզպետարանի ներկայացուցիչն ու Գավառի փոխքաղաքապետ **Գրիգոր Բոշյանը**, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության

վարչական վարույթի բաժնի պետ՝ **Արսեն Հովհաննիսյանը**, տնտեսագետ **Բարկեն Թունյանը** և այլոք:

Ազատ մրցակցության և մենաշնորհի ոլորտում առկա կոռուպցիոն խնդիրները ամփոփվել են *հոկտեմբերի 29-ին և 30-ին Աղվերանում* «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության, ՀՀ արդարադատության նախարարության, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հետ համատեղ, կազմակերպված «Բիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերը Հայաստանում» խորագրով հակակոռուպցիոն ամփոփիչ աշխատաժողովի ընթացքում: Ամփոփիչ աշխատաժողովին մասնակցել են 42 անձ, որից 15-ը՝ կին, 27-ը՝ տղամարդ: Մասնակիցների շարքում էին՝ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հակակոռուպցիոն ծրագրերի համակարգող **Նաիրա Գյուլնազարյանը**, Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող **Գարեն Զարոյանը**, ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաքսային հսկողության ծառայության պետ՝ **Գևորգ Մադոյանը**, ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավաբանական վարչության պետ **Արման Մնացականյանը**, ՀՀ ԿԱ ՊԵԿ Կազմակերպման և հսկողության վարչության պետի տեղակալ **Ռազմիկ Առաքելյանը**, ՀՀ ԿԱ Հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի փորձագետ **Աննա Գրիգորյանը**, ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի աշխատակազմի Իրավաբանական վարչության պետ **Հայկ Կարապետյանը**, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության գործարար միջավայրի բարելավման վարչության պետ **Ալբերտ Բարսյանը**, ՀՀ ֆինանսների նախարարության Լիցենզավորման գործակալության խաղային գործի Լիցենզավորման բաժնի պետ **Լուսինե Հարությունյանը**, ՀՀ Արդարադատության Հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության առաջին կարգի մասնագետ **Հայկ Կետյանը** և այլոք:

«Բիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերը Հայաստանում» խորագրով հակակոռուպցիոն ամփոփիչ աշխատաժողովը հանդիսանում էր 2015 թ.-ի դեկտեմբերի 10-11-ին և 2016 թ.-ի մայիսի 28-29-ին Աղվերանում կազմակերպված «Բիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերն ու բարեխղճության հիմնախնդիրները Հայաստանում» և «Բիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերը Հայաստանում. արձանագրված ոլորտային խնդիրները և հետագա անելիքները» աշխատաժողովների շարունակությունն ու ամփոփումը:

2015 թ.-ի դեկտեմբերի 10-11-ին Աղվերանում կայացած «Բիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերն ու բարեխղճության հիմնախնդիրները Հայաստանում» խորագրով աշխատաժողովը կազմակերպվել էր ՀՀ արդարադատության նախարարության, ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից: Գործընկերներն էին «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնն ու «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը: Աշխատաժողովին մասնակցել են 49 անձ, որոնցից 33-ը՝ տղամարդ, 16-ը՝ կին: Մասնակիցների շարքում էին ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ **Սուրեն Քրնոյանը**, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար, դեսպան **Անդրեյ Սորոկինը**, Հայաստանում Եվրոպական Միության պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավարի տեղակալ **Խոսե Մարիա Մեդինա Նավարոն**, Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող **Գարեն Զարոյանը**, ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի Իրավաբանական վարչության Վարչական վարույթի բաժնի գլխավոր մասնագետ **Արսեն Հովհաննիսյանը**, ՀՀ ԿԱ

հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի պետ **Կամո Ասատրյանը**, ՀՀ ֆինանսների նախարարության Լիցենզավորման գործակալության խաղային գործի Լիցենզավորման բաժնի պետ **Լուսինե Հարությունյանը**, ՀՀ կրթության և գիտության նախարարության գլխավոր մասնագետ **Անուշ Խաչատրյանը**, ՀՀ առողջապահության նախարարության Իրավաբանական վարչության Իրավական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար **Նելլի Թովմասյանը**, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ **Մարիամ Գալստյանը**, Հայաստանի առևտրաարդյունաբերության պալատի Միջազգային համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ **Աննա Խեչոյանը** և առաջատար մասնագետ **Մարիա Թորոսյանը**, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն **Վարուժան Հոկտանյանը** և այլոք:

Խնդիրներ և առաջարկություններ

1) Ազատ մրցակցության ոլորտում, ի տարբերություն օրինակ՝ պետական գնումների ոլորտի, բողոքարկման համակարգում առկա չէ կոնկրետ մասնագիտացած միավոր՝ օրինակ բողոքարկման խորհուրդ, որը կգրադվեր այդ հարցով:

Առաջարկ 1. Ստեղծել բողոքարկման խորհուրդ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կազմում: Սահմանել վերջինիս նիստերի առցանց հեռարձակման հնարավորություն: Բացի այդ, անհրաժեշտ է վերոնշյալ բողոքարկման խորհրդում ապահովել ոլորտային փորձառություն ունեցող ՔՀԿ-ների մասնակցությունը:

Ծանոթագրություն.

Հարկ է նշել, որ համանման հանձնաժողովի կարգավիճակ ունեն նաև այլ պետական հանձնաժողովներ, ինչպիսիք են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը և այլն: Հետևաբար նման ինստիտուցիոնալ փոփոխություն իրականացնելը ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի համար կարող է անհրաժեշտություն առաջացնել նման փոփոխություններ իրականացնել համանման կարգավիճակ ունեցող այլ հանձնաժողովների համար:

2) Իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի բազայում առկա տեղեկատվությունը հասանելի չէ հանրության համար: Ներկայումս, որպեսզի ՋԼՄ-ները ու վերլուծաբանները կարողանան պարզել տարբեր ընկերությունների փոխկապակցվածությունը կամ դրանց իրական սեփականատերերին, ռեգիստրի բազայից տեղեկատվություն ստանալու համար պարտավոր են որոշակի գումար վճարել յուրաքանչյուր ընկերության հիմնադիրների և բաժնետերերի վերաբերյալ տեղեկություն ստանալու համար: Այսպես, անվճար տեղեկատվությունը սահմանված է միայն մինչև 10 էջ տեղեկատվություն ստանալու համար, այն էլ այն դեպքում, եթե այցելում ես ՀՀ իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի գործակալություն: 10 էջից մինչև 50 էջ տեղեկատվություն ստանալու համար վճարի չափը կազմում է 5,000 (հինգ հազար) ՀՀ դրամ:

Բացի այդ, եթե նախկինում ՀՀ իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային կայքը (e-register.am) սահմանափակ անվճար տեղեկատվություն էր տրամադրում ընկերությունների բաժնետերերի և հիմնադիրների

վերաբերյալ, ապա ներկայումս, տվյալները առավել հասանելի դարձնելու փոխարեն, այժմ այն ավելի սահմանափակ է դարձել, և անվճար հիմունքներով տրամադրվում է միմիայն հիմնադիրների վերաբերյալ տեղեկատվություն ԲԲԸ-ների դեպքում: Մնացած բոլոր դեպքերում տեղեկատվությունը հասանելի է միայն էլեկտրոնային վճարովի հարցում ուղարկելու պարագայում

Առաջարկ 2. Այս կամ այն շուկայի կամ ընկերության վերաբերյալ ՁԼՄ-ների ու վերլուծաբանների կողմից ակտիվ ուսումնասիրություններ իրականացնելու և հասցեական դիտարկումներ ներկայացնելու հնարավորություն ընձեռնելու նպատակով՝ ապահովել անհրաժեշտ տեղեկատվության անվճար հասանելիություն, ինչն էլ հիմք կհանդիսանա հակամենաշնորհային քաղաքականության և մրցակցային միջավայրի բարելավման համար.

3) Նախկինում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայությունը եռամսյակային կտրվածքով հրապարակում էր արտաքին առևտրի մանրամասն տվյալները (բնեղեն արտահայտությամբ, ապրանք-երկիր կտրվածքով): Սակայն, ԵՏՄ-ին Հայաստանի անդամակցությունից հետո այդ պարբերականությունը խախտվեց՝ հրապարակելով ընդամենը 2 կիսամսյակային զեկույց, այն էլ ուշացումներով:

Առաջարկ 3. Վերականգնել արտաքին առևտրի ցուցանիշների եռամսյակը մեկ անգամ հրապարման պահանջը:

4) Արտաքին առևտրի տվյալները մաքսային ծառայության կողմից ներկայացվում են քառանիշ կոդով, այսինքն՝ խոշորացված ապրանքախմբերով, օրինակ՝ 2710 կոդով ներկայացվում է «Նավթ և նավթամթերք» ապրանքախումբը, ինչը հնարավորություն չի տալիս տեսնել, թե ներմուծման մեջ որքանն է բենզին, որքանը՝ դիզելային կամ այլ ապրանք: Հարկ է նշել, որ ութանիշ կոդով արտաքին առևտրի տվյալները երբեմն հրապարակում են ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայության կողմից, սակայն մեծ դադարներով. ասվածի վառ օրինակ կարող է հանդիսանալ այն հագնամանքը, որ սույն ամփոփման կազմման դրությամբ ամենավերջին տվյալները 2014 թվականին են վերաբերվում: Բացի այդ, վերջիններս չեն պարունակում ապրանք-երկիր հարաբերակցություն:

Առաջարկ 4. Առևտրի տվյալները մաքսային ծառայության կողմից հրապարակել ոչ թե քառանիշ կոդով, այլ՝ ութանիշ: ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայության կողմից հրապարակել վերջին 2 տարիների տվյալները՝ ներառելով ապրանք-երկիր հարաբերակցությունը:

5) Ներկայումս ներպետական օրենսդրության համաձայն պաշտպանվում են ներկրողների տվյալները, և հրապարակվող զեկույցներում ներկրվող յուրաքանչյուր ապրանքատեսակի դիմաց ոչ միայն չեն նշվում ներկրողների տվյալները, այլև՝ չի նշվում ներկրողների քանակը, ինչը թույլ կտար միանգամից հասկանալ, թե որ շուկաներում գործ ունենք մենաշնորհների կամ օլիգոպոլիաների հետ:

Առաջարկ 5. Թափանցիկության ապահովման նկատառումներով անհրաժեշտ է ներկրվող յուրաքանչյուր ապրանքատեսակի դիմաց հրապարակել ներկրողների քանակի վերաբերյալ տեղեկատվությունը: Բացի այդ, հաշվի առնելով, որ պահպանվում է համաչափության սկզբունքը, քանի որ մենաշնորհների և օլիգոպոլիաների վնասներից հանրային շահը առավել բարձր է, քան օրինակ օլիգարխ ներկրողների տվյալների պաշտպանության մասնավոր շահը, առավել բարձր մաքսային արժեք ունեցող ապրանքների դեպքում անհրաժեշտ է հրապարակել յուրաքանչյուր ապրանքատեսակի դիմաց նաև

ներկրողների տվյալները, եթե վերջիններիս բաժին է ընկնում տվյալ ապրանքատեսակի ընդհանուր ներկրման ծավալի 30%-ից ավելին:

6) Ոլորտում առկա են նաև տնտեսական խնդիրներ, որոնք արհեստական խոչընդոտներ են ստեղծում տվյալների օգտագործման համար: Մասնավորապես, նախկինում մաքսային ծառայության զեկույցները հրապարակվում էին Excel ծրագրի ձևաչափով, ինչը բավականաչափ հեշտացնում էր տվյալների մշակման գործը, սակայն նախորդ տարվանից անցում է կատարվել PDF ծրագրի ձևաչափին:

Առաջարկ 6. Վերականգնել վերոնշյալ զեկույցների Excel ծրագրի ձևաչափով հրապարակման պահանջը:

7) ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկային ծառայության կողմից հրապարակվող 1000 խոշոր հարկատուների ցանկը չի պարունակում տվյալներ առանձին հարկատեսակների հետ կապված, ինչը հնարավորություն կընձեռներ շրջանառությունների հիման վրա առանձնացնել գերիշխող դիրք ունեցողներին և այն ընկերություններին, որոնք գերշահույթներ են գրանցել:

Առաջարկ 7. Խոշոր հարկատուների ցանկում ավելացնել 2 սունյակ՝ նշելով նաև շրջանառության հարկի և շահույթի չափը: Դրանց առկայության դեպքում կարելի է կատարել հաշվարկներ, համեմատել մի քանի հարկատեսակներ, համադրել այլ տեղեկությունների հետ և հայտնաբերել ստվերային շրջանառության ռիսկեր, ինչի արդյունքում կարելի է նաև պարզել մենաշնորհների և գերիշխող դիրքի հետ կապված:

8) Վերացել է խոշոր ընկերությունների՝ պարտադիր աուդիտի իրականացման և հաշվետվությունների հրապարակման պահանջը: Թեև ստվերային գործունեություն իրականացնելու պատճառով հարկային հաշվետվությունները կարող են ամբողջությամբ չարտացոլել իրական պատկերը, այնուամենայնիվ վերոնշյալ հաշվետվությունները հնարավորություն կընձեռեն պատկերացում կազմել շուկայի համամասնությունների վերաբերյալ:

Առաջարկ 8. Վերականգնել խոշոր ընկերությունների՝ պարտադիր աուդիտի անցկացման և հաշվետվությունների հրապարակման պահանջը

9) Ներկայիս օրենսդրական դրույթները հնարավորություն են տալիս միևնույն ֆիզիկական անձանց արհեստականորեն հիմնադրել տարբեր ընկերություններ և տպավորություն ստեղծել, որ առկա չէ մենաշնորհ կամ գերիշխող դիրք: Բացի այդ, տեղեկություններ կան, որ ՀՀ ապրանք ներմուծող ընկերությունների սեփականատերերը օֆշորային գոտիներում հիմնում են ընկերություններ, որոնք ներմուծման շղթայում կատարում են բացառապես շահույթը կուտակող գործառույթ: Այսինքն՝ այն շահույթը, որ ընկերությունը պետք է ստանար Հայաստանում և դրանից վճարեր շահութահարկ, կուտակվում է օֆշորում, և ներմուծող ընկերության սեփականատերը տնօրինում է այն առանց համապատասխան հարկեր վճարելու:

Առաջարկ 9. Ոլորտում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով ներդնել համակենտրոնացման գործարքների իրական սեփականատերերի բացահայտման ինստիտուտը, ինչպես նաև ապահովել գերիշխող դիրք ունեցող ընկերությունների կողմից ապրանքը մինչև ՀՀ սահման հասցնելը փաստաթղթերի ամբողջ շղթայի թափանցիկություն:

Առավել մանրամասն տե՛ս պետական գնումների ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը ՀՀ-ում բաժնի 1-ին կետը:

10) Առկա են որոշ ոլորտներ, որոնք կարող են իրականացվել առանց մենաշնորհների կամ գերիշխող դիրքի: Ոլորտի ազատականացումը հանգեցնում է ապրանքի կամ ծառայության արժեքի նվազեցմանը, որակի բարելավմանն և առհասարակ ոլորտի զարգացմանը: Որպես օրինակ կարելի է բերել կապի ոլորտը, երբ կապի 3 օպերատորների սկսեցին ազատ մրցակցել, որը հանգեցրեց սակագների նվազեցմանը, ծառայությունների որակի բարելավմանն ու ոլորտի զարգացմանը:

Առաջարկ 10. Քայլեր ձեռնարկել այն ուղղությամբ, որպեսզի ՀՀ-ը գրավիչ դառնա արտերկրի տնտեսվարողների համար, օրինակ վիճակագրությունների համաձայն, ՀՀ-ն ներառված է այն երկրների ցանկում, որոնք համարվում են ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար հարկային տեսանկյունից առավել նպաստավոր: Վերոնշյալի արդյունքում մենաշնորհները բնականոն ճանապարհով կվերանան:

11) Պետական և ոչ պետական փորձագիտական կենտրոնների հանդեպ պետությունը ցուցաբերում է տարբերակված մոտեցում՝ առավելություն տալով պետականներին, ինչը փաստում է այն մասին, որ որոշ ոլորտներում առկա չէ ազատ մրցակցություն: Օրինակ բազմիցս վեր է հանվում այն հարցը, որ գույքը գերակա հանրային շահ ճանաչվելու դեպքում գույքի գնահատման ոլորտում չկա ազատ մրցակցություն: Բացի այդ, բացակայում է ոլորտը կանոնակարգող օրենք:

Առաջարկ 11. Մշակել և ընդունել փորձագիտական կենտրոններին վերաբերող ՀՀ օրենք:

12) ՀՀ կառավարությունը երբեմն տարբեր ընկերությունների տրամադրում է հարկային արտոնություններ, ինչի արդյունքում կարող է խախտվել մրցակցությունը և տուժել մանր և փոքր բիզնեսը: Խոշոր ընկերությունները առանց այդ էլ օգտվում են «արտադրության մաշտաբի էֆեկտ»-ից՝ երեւոյթ, որի արդյունքում միավոր արտադրանքի վրա կատարվող ծախսերը նվազում են արտադրության ծավալների աճի դեպքում, հետևաբար բնականորեն գտնվում են ավելի շահեկան դիրքերում, քան տվյալ ոլորտում գործող ՓՄՁ-ները: Հարկային այնպիսի արտոնություններ տրամադրել խոշոր ընկերություններին, որոնցից զրկված են ՓՄՁ-ները, նշանակում է էլ ավելի շահեկան դիրքեր ապահովել խոշոր ընկերությունների համար:

Առաջարկ 12. Ստեղծել գնահատող հանձնաժողով, որը, մինչ ընկերություններին հարկային արտոնություններ տրամադրելը, կգնահատի դրանց ազդեցությունը ՓՄՁ-ների վրա:

13) Ինչպես գիտենք, ազատ մրցակցության ոլորտը բավականաչափ լայն է: Մակայն, հարկ է նշել, որ ՀՀ 2015-2018թթ.. հակակոռուպցիոն ռազմավարության պետական եկամուտների ոլորտի միջոցառումների ծրագրի 54 կետերից ընդամենը 6 կամ 7 կետեր ուղղակի առնչություն ունեն այս ոլորտի հետ, ինչը :

Առաջարկ 13. Ազատ մրցակցության ոլորտի համար մշակել և սահմանել առանձին ռազմավարություն համապարփակ, հետևողական և մանրակրկիտ քաղաքականության իրականացումն ապահովելու համար:

14) «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքի կիրառման մեխանիզմները տարբերվում են ԵՏՄ իրավական ակտերով նախատեսված կարգավորումներից, այդ թվում՝ վերոնշյալ օրենքը չի նախատեսում պատասխանատվություն պետական մարմինների և տնտեսվարող սուբյեկտների պաշտոնատար անձանց համար:

Առաջարկ 14. Սահմանել խիստ պատասխանատվության միջոցներ մեծ տուգանքների և աշխատանքից հեռացման տեսքով պետական մարմինների և տնտեսվարող սուբյեկտների պաշտոնատար անձանց համար, ովքեր խախտում են ոլորտային օրենսդրության պահանջները:

Ծանոթագրություն.

Սույն թվականի հունիսի 22-ին Գավառում տեղի ունեցած «Ազատ մրցակցության ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը» խորագրով հակակոռուպցիոն միջոցառման ընթացքում պետական մարմինները և ՔՀԿ ներկայացուցիչները այս հարցի շուրջ համաձայնություն եկան առ այն, որ օրենքի նախագիծ կա, որով խիստ վարչական պատասխանատվություն է նախատեսվում թե պետական մարմինների, թե՝ տնտեսվարող սուբյեկտների պաշտոնատար անձանց համար: Սակայն, հարկ է նշել, որ հոկտեմբերի 06-ի՝ ՀՀ կառավարության օրակարգում ներկայացված նախագիծ վերջնական տարբերակում մի շարք զանցակազմերի համար սահմանված է խիստ պատասխանատվություն միայն տնտեսվարող սուբյեկտների պաշտոնատար անձանց համար:

15) Ազատ մրցակցության ոլորտում շատ հաճախ կարգավորիչ և վերահսկիչ գործառույթները տարանջատված չեն, և միևնույն մարմինը միաժամանակ հանդես է գալիս և կարգավորման, և վերահսկման դերում, օրինակ՝ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, Կենտրոնական բանկը և այլն: Վերոնշյալի արդյունքում վերջինս միշտ դրական է գնահատում իր կարգավորման ներքո գտնվող մարմինների քայլերը. ներկայումս նույնիսկ դատական նիստ է ընթանում՝ կապված վերոնշյալ հանձնաժողովի կողմից ՀԷՑ-ի արարքները դրական գնահատելու հետ: Պատճառը նաև այն հանգամանքն է, որ նման հանձնաժողովի արտաբյուջեները հենց գոյանում են իրենց ենթակայության ներքո գտնվող մարմիններից:

Առաջարկ 15. Օրենքով սահմանել՝ կարգավորիչ և վերահսկիչ գործառույթների տարանջատում՝ բացառելով միևնույն մարմնի կողմից կատարելը:

4) «Լիցենզիաների և թույլտվությունների ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը ՀՀ-ում».

Լիցենզիաների և թույլտվությունների ոլորտում առկա կոռուպցիոն խնդիրները քննարկվել են 2016 թվականի հոկտեմբերի 19-ին Արարատ քաղաքում «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հետ համատեղ, Եվրոպական միության ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ իրականացվող «Լիցենզիաների և թույլտվությունների ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը» խորագրով հակակոռուպցիոն միջոցառման ընթացքում: Հակակոռուպցիոն միջոցառմանը մասնակցում էին թվով 18 անձ, որից 10-ը տղամարդ, 8-ը կին:

Լիցենզիաների և թույլտվությունների ոլորտում առկա կոռուպցիոն խնդիրները ամփոփվել են հոկտեմբերի 29-ին և 30-ին Աղվերանում «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության, ՀՀ արդարադատության նախարարության, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հետ համատեղ, կազմակերպված «Բիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերը Հայաստանում» խորագրով հակակոռուպցիոն ամփոփիչ աշխատաժողովի ընթացքում: Ամփոփիչ աշխատաժողովին մասնակցել են 42 անձ, որից 15-ը՝ կին, 27-ը՝ տղամարդ: Մասնակիցների շարքում էին՝ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հակակոռուպցիոն ծրագրերի համակարգող **Նաիրա Գյուլնազարյանը**, Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող **Գարեն Զարոյանը**, ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաքսային հսկողության ծառայության պետ՝ **Գևորգ Սաղոյանը**, ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավաբանական վարչության պետ **Արման Մնացականյանը**, ՀՀ ԿԱ ՊԵԿ Կազմակերպման և հսկողության վարչության պետի տեղակալ **Ռազմիկ Առաքելյանը**, ՀՀ ԿԱ Հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի փորձագետ **Աննա Գրիգորյանը**, ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի աշխատակազմի Իրավաբանական վարչության պետ **Հայկ Կարսպետյանը**, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության գործարար միջավայրի բարելավման վարչության պետ **Ալբերտ Բաբայանը**, ՀՀ ֆինանսների նախարարության Լիցենզավորման գործակալության խաղային գործի Լիցենզավորման բաժնի պետ **Լուսինե Հարությունյանը**, ՀՀ Արդարադատության Հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության առաջին կարգի մասնագետ **Հայկ Կեսոյանը** և այլք:

Լիցենզիաների և թույլտվությունների ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերի վերհանման և առաջարկությունների քննարկման նպատակով հանդիպում է տեղի ունեցել նաև ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի տեղակալ **Արթուր Սարգսյանի** հետ:

«Բիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերը Հայաստանում» խորագրով հակակոռուպցիոն ամփոփիչ աշխատաժողովը հանդիսանում էր 2015 թ.-ի դեկտեմբերի 10-11-ին և 2016 թ.-ի մայիսի 28-29-ին Աղվերանում կազմակերպված «Բիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերն ու բարեխղճության հիմնախնդիրները Հայաստանում» և «Բիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերը Հայաստանում. արձանագրված ոլորտային խնդիրները և հետագա անելիքները» աշխատաժողովների շարունակությունն ու ամփոփումը:

2015 թ.-ի դեկտեմբերի 10-11-ին Աղվերանում կայացած «Բիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերն ու բարեխղճության հիմնախնդիրները Հայաստանում» խորագրով աշխատաժողովը կազմակերպվել էր ՀՀ արդարադատության նախարարության, ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից: Գործընկերներն էին «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնն ու «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը: Աշխատաժողովին մասնակցել են 49 անձ, որոնցից 33-ը՝ տղամարդ, 16-ը՝ կին: Մասնակիցների շարքում էին ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ **Սուրեն Քրնոյանը**, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ղեկավար, դեսպան **Անդրեյ Սորոկինը**, Հայաստանում Եվրոպական Միության պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավարի տեղակալ **Խոսե Մարիա Մեդինա Նավարոն**, Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող **Գարեն Զադոյանը**, ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի Իրավաբանական վարչության Վարչական վարույթի բաժնի գլխավոր մասնագետ **Արսեն Հովհաննիսյանը**, ՀՀ ԿԱ հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի պետ **Գասն Ասատրյանը**, ՀՀ ֆինանսների նախարարության Լիցենզավորման գործակալության խաղային գործի Լիցենզավորման բաժնի պետ **Լուսինե Հարությունյանը**, ՀՀ կրթության և գիտության նախարարության գլխավոր մասնագետ **Անուշ Խաչատրյանը**, ՀՀ առողջապահության նախարարության Իրավաբանական վարչության Իրավական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար **Նելլի Թովմասյանը**, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ **Մարիամ Գալստյանը**, Հայաստանի առևտրաարդյունաբերության պալատի Միջազգային համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ **Աննա Խեչոյանը** և առաջատար մասնագետ **Մարիա Թորոսյանը**, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն **Վարուժան Հոկտանյանը** և այլոք:

Խնդիրներ և առաջարկություններ

1. Նախկինում շինարարական գործունեություն իրականացնելու համար լիցենզիաների տրամադրման ոլորտում ընկերությունը ստանում էր մեկ ընդհանուր լիցենզիա: Ներկայումս շինարարության տարբեր ոլորտների դեպքում ընկերությունը ստանում է տարբեր լիցենզիաներ ներդիրներով, և յուրաքանչյուրի համար վճարվում է 80 հազար դրամի չափով պետական տուրք:

Այս ոլորտում լիցենզիայի տրամադրումը շարունակում է կոռուպցիոն ռիսկերով լի գործընթաց համարվել: Մասնավորապես՝ այդ լիցենզիաների տրամադրման համար բացակայում են անհրաժեշտ մասնագետների որակավորման վկայականները կամ դրանց ստացման մեխանիզմները, ուստի լիցենզիա տրամադրող մարմինը սկսում է անուղղակի կերպով նման ծառայություն մատուցել:

Առաջարկ 1. Հստակեցնել ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի թիվ 777-Ն որոշմամբ սահմանված քաղաքաշինության բնագավառում շինարարություն իրականացման կարգով սահմանված թվով հինգ ոլորտները՝ 1) բնակելի, հասարակական և արտադրական, 2) տրանսպորտային, 3) հիդրոտեխնիկական, 4) էներգետիկ և 5) կապի:

Բացի այդ, վերոհիշյալ կարգով սահմանված լիցենզիայի տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկում ընդգրկված «*տվյալ ոլորտի առնվազն մեկ մասնագետի*,

այդ թվում՝ նրա մասնագիտական ունակությունը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ դիպլոմ, վկայական, վերապատրաստման վկայական, կոչումը հավաստող փաստաթղթեր կամ աշխատանքային գրքույկ, ինչպես նաև մասնագետի անձնագրի պատճենը» եզրույթներն ավելի հստակեցնել:

Ավելին, սահմանել այն դեպքերը, երբ տվյալ մասնագետ(ները) նոր են մուտք գործում տվյալ ոլորտ ՀՀ-ում և չունեն որևիցե վկայական, դիպլոմ, սակայն ունեն համապատասխան փորձ ՌԴ-ում կամ արտերկրում:

2. Հասարակական տարածքի՝ վերափոխումը, բարեկարգումը, վերանորոգումը կամ մեկ այլ շինարարական աշխատանք դիտարկվում է, որպես շինարարական թույլտվության ենթակա գործունեություն:

Առաջարկ 2. Հստակեցնել «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ պարբերությամբ սահմանված Շինարարական թույլտվության ոչ ենթակա «*շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման, ներքին հարդարման տարածքների բարեկարգման և այլ ցածր ռիսկայնություն ունեցող աշխատանքների համար, եթե դրանք չեն խոչընդոտում անշարժ գույքի նպատակային օգտագործումը և չեն հակասում սահմանված սերվիստուտներին*» արտահայտությունը:

3. Համաշխարհային բանկի «Doing Business»-ի ցուցիչներից մեկը վերաբերվում է պահեստ կառուցելու գործընթացին: Այդ ցուցանիշով Հայաստանը գտնվում է 81-րդ հորիզոնականում՝ 190 երկրների շարքում: Հայաստանում պահեստ կառուցելու ամբողջ ընթացքը, ըստ Համաշխարհային բանկի հաշվարկների, տևում է 84 օր և բաղկացած է 18 գործընթացներից:

Առաջարկ 3. Հաշվի առնելով, որ ոլորտում կոռուպցիոն ռիսկերը բարձր են՝ պարզեցնել ՀՀ-ում պահեստ կառուցելու ընթացակարգերը՝ կրճատելով ժամկետները և նվազեցնելով գործընթացները:

Օանթագրություն.

«Doing Business»-ի պահեստ կառուցելու գործընթացի ցուցի լավագույն օրինակներից մեկն է հանդիսանում Վրաստանի փորձը, որով Վրաստանը զբաղեցնում է 8-րդ հորիզոնականը՝ 190 երկրների շարքում: ամբողջ ընթացքը բաղկացած է 7 գործընթացից ընդհանուր՝ 48 օր տևողությամբ:

4. Հնդկաստանում վարորդական իրավունքի ձեռք բերման գործընթացը ենթարկվել է ինովատիվ մոնիթորինգի, և արդյունքում պարզվել է, որ՝

- դիմորդների 71% ձեռք են բերել վարորդական իրավունքը՝ առանց վարորդական քննություն հանձնելու,
- դիմորդների 71% ձեռք են բերել վարորդական իրավունքը՝ առանց ավտոմեքենա վարելու հմտությունների ունենալու,
- գոյություն ունի կոռուպցիայի պարզ սխեմա, ըստ որի՝ դիմորդներն օգտվում են միջնորդների ծառայությունից կաշառքը փոխանցելու համար:

Առաջարկ 4. Նման մեթոդաբանություն օգտագործելով՝ իրականացնել մոնիթորինգի ծրագիր ՀՀ-ում վարորդական իրավունքի ձեռք բերման գործընթացը վերահսկելու և կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու նպատակով:

5. Ներկայումս կազմվում է «Թույլտվությունների մասին» ՀՀ օրենք: Հարկ է նշել, որ ներկայումս գործում է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը: Քննարկումների ընթացքում բարձրացվում էր այն հարցը, որ ինչո՞ւ ունենանալ համանման 2 իրավական ակտեր:

Առաջարկ 5. Թույլտվությունների և լիցենզիաների տրամադրումը կանոնակարգել մեկ իրավական ակտով՝ նախատեսելով վերջիններիս տրամադրման համապատասխանաբար պարզ և բարդ ընթացակարգեր:

5) «Պետական գնումների ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը ՀՀ-ում».

Պետական գնումների ոլորտում առկա կոռուպցիոն խնդիրները քննարկվել են 2016 թվականի մայիսի 28-ին և 29-ին Աղվերանում «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության, ՀՀ արդարադատության նախարարության, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հետ համատեղ, Եվրոպական միության ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ կազմակերպած «Բիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերը Հայաստանում. արձանագրված ոլորտային խնդիրները և հետագա անելիքները» խորագրով հակակոռուպցիոն աշխատաժողովի ընթացքում: Հակակոռուպցիոն աշխատաժողովին մասնակցել են 48 անձ, որից՝ 19 կին, 29 տղամարդ: Միջոցառման մասնակիցներից էին՝ ՀՀ արդարադատության փոխնախարար **Սուրեն Քրնոյանը**, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հակակոռուպցիոն ծրագրերի համակարգող **Նաիրա Գյուլնազարյանը**, Հայաստանում ԵՄ պատվիրակության առևտրի հարցերով պատասխանատու **Կարեն Ազարյանը**, Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող **Կարեն Զադոյանը**, ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի Պետական ներքին ֆինանսական հսկողության և պետական գնումների մեթոդաբանության վարչության պետ **Սերգեյ Շահնազարյանը**, ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի Մեթոդաբանության և ծրագրերի մշակման վարչության պետ **Արման Մանասերյանը**, ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաքսային հսկողության ծառայության պետ՝ **Գևորգ Մադոյանը**, ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավաբանական վարչության պետ **Արման Մնացականյանը**, ՀՀ ԿԱ ՊԵԿ Կազմակերպման և հսկողության վարչության պետի տեղակալ **Ռազմիկ Առաքելյանը**, ՀՀ ԿԱ Հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի պետ **Կամո Ասատրյանը** և փորձագետ **Լիլիթ Խաչատրյանը**, «ՀՀ Առևտրաարդյունաբերական պալատին կից մշտապես գործող արբիտրաժային դատարան» հիմնակի գլխավոր քարտուղար **Արմեն Ոսկանյանը**, ՀՀ արդարադատության նախարարության փորձագետ **Նանե Հարությունյանը** և Հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության առաջին կարգի մասնագետ **Հայկ Կեստյանը**, ՓՄՁ Համագործակցության Ասոցիացիայի նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կառավարման խորհրդի անդամ **Հակոբ Ավագյանը** և այլք:

Պետական գնումների ոլորտում առկա կոռուպցիոն խնդիրները քննարկվել են նաև 2016 թվականի հուլիսի 20-ին Կապանում «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հետ համատեղ, Եվրոպական միության ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ կազմակերպված «Պետական գնումների և պետական գույքի մասնավորեցման ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը» խորագրով հակակոռուպցիոն միջոցառման ընթացքում: Հակակոռուպցիոն միջոցառմանը մասնակցել են 40 անձ, որից՝ 21 կին, 19 տղամարդ: Մասնակիցների շարքում էին՝ Սյունիքի փոխարգպետ՝ **Վարդան Դավթյանը**, Կապանի քաղաքապետ **Աշոտ Հայրապետյանը**, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հակակոռուպցիոն ծրագրերի համակարգող **Նաիրա Գյուլնազարյանը**, ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի պետական ներքին ֆինանսական հսկողության և պետական

գնումների մեթոդաբանության վարչության գնումների գործընթացի կարգավորման ու համակարգման բաժնի պետ **Վահե Մահոնեսյանը** և այլոք:

Պետական գնումների ոլորտում առկա կոռուպցիոն խնդիրները ամփոփվել են **հոկտեմբերի 29-ին և 30-ին Աղվերանում** «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության, ՀՀ արդարադատության նախարարության, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հետ համատեղ, կազմակերպված «Բիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերը Հայաստանում» խորագրով հակակոռուպցիոն ամփոփիչ աշխատաժողովի ընթացքում: Ամփոփիչ աշխատաժողովին մասնակցել են 42 անձ, որից 15-ը՝ կին, 27-ը՝ տղամարդ: Մասնակիցների շարքում էին՝ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հակակոռուպցիոն ծրագրերի համակարգող **Նաիրա Գյուլնազարյանը**, Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող **Գարեն Զադոյանը**, ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաքսային հսկողության ծառայության պետ՝ **Գևորգ Մադոյանը**, ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավաբանական վարչության պետ **Արման Մնացականյանը**, ՀՀ ԿԱ ՊԵԿ Կազմակերպման և հսկողության վարչության պետի տեղակալ **Ռազմիկ Առաքելյանը**, ՀՀ ԿԱ Հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի փորձագետ **Աննա Գրիգորյանը**, ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի աշխատակազմի Իրավաբանական վարչության պետ **Հայկ Կարապետյանը**, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության գործարար միջավայրի բարելավման վարչության պետ **Ալբերտ Բաբայանը**, ՀՀ ֆինանսների նախարարության Լիցենզավորման գործակալության խաղային գործի Լիցենզավորման բաժնի պետ **Լուսինե Հարությունյանը**, ՀՀ Արդարադատության Հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության առաջին կարգի մասնագետ **Հայկ Կեսոյանը** և այլոք:

Վերջինս հանդիսանում էր 2015 թ.-ի դեկտեմբերի 10-11-ին և 2016 թ.-ի մայիսի 28-29-ին Աղվերանում կազմակերպված «Բիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերն ու բարեխղճության հիմնախնդիրները Հայաստանում» և «Բիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերը Հայաստանում. արձանագրված ոլորտային խնդիրները և հետագա անելիքները» աշխատաժողովների շարունակությունն ու ամփոփումը:

2015 թ.-ի դեկտեմբերի 10-11-ին Աղվերանում կայացած «Բիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերն ու բարեխղճության հիմնախնդիրները Հայաստանում» խորագրով աշխատաժողովը կազմակերպվել էր ՀՀ արդարադատության նախարարության, ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից: Գործընկերներն էին «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնն ու «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը: Աշխատաժողովին մասնակցել են 49 անձ, որոնցից 33-ը՝ տղամարդ, 16-ը՝ կին: Մասնակիցների շարքում էին ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ **Սուրեն Քրնոյանը**, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար, դեսպան **Անդրեյ Սորոկինը**, Հայաստանում Եվրոպական Միության պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավարի տեղակալ **Խոսե Մարիա Մեդինա Նավարոն**, Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող **Գարեն Զադոյանը**, ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի Իրավաբանական վարչության Վարչական վարույթի բաժնի գլխավոր մասնագետ **Արսեն Հովհաննիսյանը**, ՀՀ ԿԱ հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի պետ **Գառն Ասատրյանը**, ՀՀ ֆինանսների

նախարարության Լիցենզավորման գործակալության խաղային գործի Լիցենզավորման բաժնի պետ **Լուսինե Հարությունյանը**, ՀՀ կրթության և գիտության նախարարության գլխավոր մասնագետ **Անուշ Խաչատրյանը**, ՀՀ առողջապահության նախարարության Իրավաբանական վարչության Իրավական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար **Նելլի Թովմասյանը**, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ **Մարիամ Գալստյանը**, Հայաստանի առևտրաարդյունաբերության պալատի Միջազգային համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ **Աննա Խեչոյանը** և առաջատար մասնագետ **Մարիա Թորոսյանը**, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն **Վարուժան Հոկտանյանը** և այլոք:

Խնդիրներ և առաջարկություններ

1) Պետական գնումներին մասնակից ընկերությունների իրական սեփականատերերի մասին ամբողջական տեղեկատվության բացակայում է:

Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության համաձայն՝ իրավաբանական անձանց հիմնադիր կարող են հանդիսանալ թե՛ ֆիզիկական, թե՛ իրավաբանական անձինք: Այնուամենայնիվ, առևտրային կազմակերպությունների դեպքում վերջնական շահույթը հիմնականում պատկանում է ֆիզիկական անձանց: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրավաբանական անձանց ստեղծման գործընթացը դյուրին է, իսկ վերջիններիս ֆիզիկական անձ հանդիսացող իրական սեփականատերերին հայտնաբերելը՝ բարդ, իրավաբանական անձինք հաճախ ստեղծվում կամ օգտագործվում են կոռուպցիոն հանցագործություններ կատարելու, խնդրահարույց գործարքներ իրականացնելու համար: Պետական գնումների գործընթացին հաճախ մասնակցում, և պետական գնման պայմանագիր են կնքում այնպիսի իրավաբանական անձինք, որոնց ծագումը թե՛ հանրության, թե՛ իրավասու պետական մարմինների համար հայտնի չէ, այսինքն՝ անհայտ են այն ֆիզիկական անձինք, ովքեր լինելով պետական գնման գործարք կնքած իրավաբանական անձի իրական սեփականատերեր՝ շահույթ են ստանում պետական գնման պայմանագրից: Այս բացը բազմաթիվ կոռուպցիոն ռիսկերի առիթ է հադիսանում:

Բացի այդ, ՀՀ վերահսկիչ պալատի 2013թ. հաշվետվությունը փաստում է, որ նկատելի է ոչ ռեզիդենտ ընկերությունների «արհեստական ճանապարհով» ստեղծման և դրանց առկայության օգտագործման դեպքեր: Մասնավորապես, որևէ մրցույթով հետաքրքրված տեղական ընկերությունը միտումնավոր ստեղծում է որևէ ոչ ռեզիդենտ ընկերություն կամ կապ է հաստատում համանման ընկերության հետ, որպեսզի շահեկան դիրք գրավելու արդյունքում կարողանա հաղթող ճանաչվել մրցույթում և կնքել պայմանագիր: Խնդիրն այն է, որ այդ ընկերությունների համար շահեկան է այն, որ կախված իրենց կազմակերպարավական տեսակից, ՀՀ-ում պետական հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմինները տվյալ գնման դեպքում չեն կարողանում լիարժեք կերպով իրականացնել վերահսկողություն: Արդյունքում, որոշ ոչ ռեզիդենտների մասնակցությունը պետական գնումներին դառնում է զուտ ձևական, գումարները փոխանցվում են Հանրապետությունից դուրս: Նվազում է նաև վերահսկելիությունը:

Ավելին, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասին համաձայն՝ արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի

քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Այս հոդվածն, ըստ էության, նպատակաուղղված է բացառել կեղծ մրցակցությունը և ապրանքների ու ծառայությունների գների արհեստական աճը, սակայն իրական սեփականատերերի բացահայտման հնարավորության բացակայության դեպքում վերջինիս իրագործումը անհնար է:

Առաջարկ 1. Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է օրենսդրական բարեփոխումներ իրականացնել և ՀՀ ներպետական օրենսդրության մեջ ներդնել իրական սեփականատերերի ինստիտուտը և սահմանել վերջիններիս բացահայտման հստակ մեխանիզմներ:

Անհրաժեշտ է իրական սեփականատերերի բացահայտման նպատակով՝ ստեղծել ռեգիստր, որին ընկերությունները պարտավոր են տրամադրել տեղեկատվություն այն մասնավոր անձանց վերաբերյալ, որոնք հանդիսանում են իրենց իրական սեփականատերերը, օրենսդրորեն սահմանել, որ իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է լինի հրապարակային:

Բացի այդ անհրաժեշտ է սահմանել, որ պետական գնումներին մասնակիցները, ի թիվս այլ օրենքով նախատեսված փաստաթղթերի, պետք է տրամադրեն իրենց իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվություն, որպեսզի իրենց հայտերն ուսումնասիրվեն, ինչպես նաև պետական գնումների պայմանագրի խզում, երբ ընկերությունը տրամադրում է կեղծ կամ ոչ ճշգրիտ տեղեկատվություն իր իրական սեփականատերերի վերաբերյալ պայմանագիր կնքելիս կամ պայմանագրի կատարման ընթացքում չի թարմացնում իր իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվությունը իրական սեփականատերերի փոփոխման ժամանակ: Ավելին, հարկ ենք համարում նախատեսել պատասխանատվության խիստ միջոցներ վերոնշյալ պահանջները չկատարելու համար և ընկերություններից, և պաշտոնատար անձանցից:

Նաև կարիք կա վերոնշյալ ռեգիստրներին օժտել հարկային, բանկային գաղտնիք պարունակող տեղեկատվությամբ, որպեսզի վերջինս կարողանա ստուգել տրամադրված տեղեկատվության արժանահավաստությունը: Առաջարկվեց նաև օֆշորային գոտիներում գտնվող բանկերի հետ կնքել տեղեկատվության փոխանակման պայմանագրեր: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ նման համաձայնագիր ներկայումս առկա է, օրինակ՝ Շվեյցարիայի և ԱՄՆ-ի միջև:

Օսնոթագրություն

Իրական սեփականատերերի սահմանումը տրված է Եվրոպական միության Փողերի լվացման դեմ 4-րդ՝ 2015/849 թվակիր դիրեկտիվի 3.6 հոդվածում՝ ցանկացած ֆիզիկական անձ, ով տիրապետում է ընկերությունը, ով վերահսկում է ընկերությունը և ում անունից գործարքը կամ գործունեությունն է իրականացվում: Ցանկացած ֆիզիկական անձ, ով տիրապետում է, ուղղակի կամ անուղղակի կերպով, մարմնում ավելի քան 25 տոկոս բաժնի, համարվում է իրական սեփականատեր: Եթե որևէ անձ չի տիրապետում վերոնշյալ շեմով նախատեսված բաժնի, այն ֆիզիկական անձը, ով ավագ ղեկավար պաշտոն է զբաղեցնում, կարող է համարվել իրական սեփականատեր: Համանման սահմանում տրված է նաև Ընկերությունների սեփականատերերի և վերահսկողության թափանցիկության ԱՄՆ G-8 Գործողությունների ծրագրով:

Իրական սեփականատերերի բացահայտման ինստիտուտի ներդրմամբ կարող ենք հասնել հետևյալ արդյունքներին՝ կրթարձրանա գնումներում թափանցիկությունն ու

հաշվետվողականությունը, շահերի բախման իրավիճակները կկանխարգելվեն, կոռուպցիայի մակարդակը կնվազի նաև ազատ մրցակցության սկզբունքի տեսանկյունից, ինչպես նաև արհեստականորեն գնաճ տեղի չունենա:

Եվրոպական միության Փողերի լվացման դեմ 4-րդ հրահանգը պահանջում է 2017թ. հունիսից Եվրոպական միության մասնակից պետություններից հիմնել կազմակերպությունների իրական սեփականատերերի ռեգիստրներ: Հրահանգը չկատարելու առավելագույն տուգանքները սահմանվում են առնվազն 5 մլն եվրո կամ ընկերության տարեկան շրջանառության 10%: ԵՄ Եվրոպական տնտեսական և սոցիալական կոմիտեի (EESC) կողմից ընդունված կարծիքը Եվրոպական միության մասնակից պետություններին ևս կոչ է անում հիմնել կազմակերպությունների իրական սեփականատերերի ռեգիստրներ:

Մի շարք պետություններ իրենց օրենսդրությամբ կարգավորել են իրական սեփականատերերի բացահայտման հետ կապված հարցերը: Մասնավորապես՝ Սլովակիայում 2015 թվականի նոյեմբերի 1-ից ուժի մեջ է մտել պետական գնումները կարգավորող օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքը¹, որի համաձայն պետական գնումներին մասնակցելու և որպես մրցույթում հաղթող՝ պայմանագիր կնքելու համար ընկերությունները պարտավոր են հասարակությանը հասանելի գրանցամատյանում գրանցել իրենց իրական սեփականատերերին (ultimate beneficial owners): Նորվեգիայի Թագավորության խորհրդարանը 2015 թվականի հունիսի 5-ին քվեարկել է իրական սեփականատերերի գրանցամատյանի ստեղծման օգտին²:

Մեծ Բրիտանիայում գրանցված բոլոր իրավաբանական անձինք 2016 թվականի ապրիլից պարտավոր են պահպանել իրենց իրական սեփականատերերի ռեգիստր: Իսկ արդեն 2016 թվականի հունիսի 30-ից այս տեղեկատվությունը վերջիններս պարտավոր են ներկայացնել ընդհանուր ռեգիստրում գրանցելու համար:

Համաշխարհային բանկին ուղղված՝ քաղաքացիական հասարակության 107 կազմակերպությունների կողմից ստորագրված նամակից հետո Բանկը փոխեց իր քաղաքականությունները և սկսեց հրապարակել բանկի կողմից ֆինանսավորված գնումների մյուս կողմերի իրական սեփականատերերի ինֆորմացիան:

2015թ.-ից սկսած ԱՄՆ Գանձապետարանի վարչությունը սկսել է հրահանգել ԱՄՆ բոլոր միջազգային ֆինանսական հաստատությունների, ինչպիսիք են Համաշխարհային բանկը և Արժույթի միջազգային հիմնադրամը, գործադիր տնօրեններին պահանջել բոլոր հաստատություններից հավաքել, ստուգել և հրապարակել մասնավոր կազմակերպությունների իրական սեփականատերերի վերաբերյալ ինֆորմացիան, որը ստանում է ԱՄՆ-ի կողմից ֆինանսավորում միջազգային ֆինանսական հաստատությունների միջոցով:³

Հարկ է նշել, որ մայիսի 28-29-ին Ադվերանում տեղի ունեցած քննարկումներից հետո այս հարցը բարձրաձայնվեց Հակակոռուպցիոն խորհրդի օրակարգում և ՀՀ արդարադատության նախարարությանը հրահանգ տրվեց օրինագիծ սահմանել: Սակայն հարկ է նշել, որ օրինագծով պարտավորությունը դրվում է միայն պետական գնումների համար, ոչ թե՝ համակարգային մակարդակով՝ իրավական սեփականատերեր հիմնելու ռեգիստր հիմնելու ուղղությամբ:

¹ Տե՛ս <http://www.iflr.com/Article/3513647/Slovak-Republic-Procurement-and-beneficial-owners.html>

² Տե՛ս https://www.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/512333/bis-16-161-beneficial-ownership-transparency.pdf

³ Տե՛ս <https://www.globalwitness.org/en/blog/how-anonymously-owned-companies-are-used-rip-government-budgets/>

2) Նկատվում է միտում, երբ ԼՂՀ-ում գրանցված ընկերությունները մասնակցում և հաղթում են պետական գնումների մրցույթներում: Ներկայումս ԼՂՀ-ում գրանցված ընկերությունների սեփականատերերի մասով տեղեկություններ հայթայթելը հնարավոր չէ ինչպես e-register.am կայքի, այնպես էլ շահագործող համապատասխան մարմնի կողմից:

Առաջարկ 2. Թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման նկատառումներից ելնելով՝ անհրաժեշտ է ներդաշնակեցնել ԼՂՀ պետեզիստրի տվյալները և հնարավորություն ընձեռել տվյալների ստացման մատչելիության բարձրացման ուղղությամբ, օրինակ՝ առցանց եղանակով:

3) Խնդիրներ նաև առկա են **մրցակցային ուղղություններում ոչ մրցակցային սկզբունքների կիրառության** հետ կապված: Այսպես, մեկ անձից կտարվող գնումները շարունակում են մնալ պատվիրատուների նախընտրելի գնման ձևը, քանի որ ընթացակարգերի ավելի քան 70%-ը իրականացվում է այս գնման ձևով: Ավելին, նշվածի համատեքստում պետք է նշել, որ այլընտրանքի առկայության պարագայում ոչ մրցակցային մեթոդով իրականացված պայմանագրերը ևս բավական լուրջ կշիռ ունեն: 2015թ.-ին կնքվել է շուրջ 4372 պայմանագիր, որի արդյունքում գեներացվել է 35 մլրդ դրամի պարտավորություն: Այսինքն այլընտրանքի առկայության պարագայում ոչ մրցակցային մեթոդով իրականացված պայմանագրերը կազմում են քանակային առումով ընդհանուրի 35% (4372/12358), իսկ գումարային առումով 17% (35/201): 2016թ.-ին այլընտրանքի առկայության պարագայում ոչ մրցակցային մեթոդով իրականացված պայմանագրերը կազմում են շուրջ 1953 պայմանագիր, որի արդյունքում գեներացվել է 16.6 մլրդ դրամի պարտավորություն: Այսինքն այլընտրանքի առկայության պարագայում ոչ մրցակցային մեթոդով իրականացված պայմանագրերը կազմում են քանակային առումով ընդհանուրի 35% (1953/5497), իսկ գումարային առումով 18% (16/93):

Առաջարկ 3. Դադարեցնել ՀՀ կառավարության կողմից մրցակցային ուղղություններում դրամաշնորհների տեսքով՝ առանց մրցույթի գումարներ հատկացնելու պրակտիկան:

4) Առկա են մի շարք խնդիրներ բողոքարկման համակարգում: Նախ, պրակտիկայում առկա են դեպքեր, երբ պետական գնումների հայտ ներկայացրած սուբյեկտներին մերժում են՝ առանց պատճառները հիմնավորելու:

Բացի այդ, Բողոքարկման քննությունների նիստերի արձանագրությունների ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ նիստերին մասնակցել են անձինք, որոնք չեն հանդիսացել Բողոքարկման Խորհրդի անդամներ: Բացի այդ, չնայած օրենքով հստակ սահմանված պահանջին, Կենտրոնական Բանկի ներկայացուցիչ Բողոքարկման Խորհրդի ցանկում չի եղել:

Թեև նկատելի են որոշ դրական տեղաշարժեր, այնուամենայնիվ բողոքարկման քննությունների նիստերի առցանց հեռարձակման որակի և ամբողջականության մասով առկա են դեռ խնդիրներ, որը դժվարություններ է առաջացնում թափանցիկություն ու վերահսկելիությունն ապահովելու հարցում:

Առաջարկ 4. Առաջարկվում է տվյալ ոլորտում պարտավորեցնել ոլորտի պատասխանատուներին ցանկացած մերժման դեպքում գրավոր կարգով տալ մերժման հիմնավորումներ:

Առաջարկ 5. Թափանցիկություն ու վերահսկելիությունն ապահովելու նպատակով՝ վերանայել բողոքարկման խորհրդի ձևավորման կարգը՝ ավելացնելով հանրային հատվածի մասնակցությունը բարձր տոկոսային հարաբերակցությամբ: Անհրաժեշտ է հստակ հետևել օրենքի պահանջներին և բացառել այն անձանց մասնակցությունը, ովքեր անդամ չեն

հանիսանում և հակառակը՝ պարտադրել մասնակցել այն անձանց, ում վրա է օրենքով դրված է նման պարտականություն:

Առաջարկ 6. Ապահովել առցանց հեռարձակում՝ առանց ընդհատումների՝ բարձր որակով:

Ծանոթագրություն.

ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 9-րդ հոդվածը ևս սահմանում է ներքին վերահսկողության արդյունավետ համակարգի, ներառյալ բողոքարկման արդյունավետ համակարգի անհրաժեշտությունը:

7) Բացերը առկա են նաև **գնահատող հանձնաժողովի** գործունեության մեջ, քանի որ վերջինիս կազմում առկա չեն ՔՀԿ ներկայացուցիչներ:

Առաջարկ 7. Պետական գնումների ոլորտում մրցույթների թափանցիկության և օբյեկտիվության ապահովման նկատառումներից ելնելով՝ գնահատող հանձնաժողովներում ներգրավել և ապահովել ՔՀԿ ներկայացուցիչների մասնակցությունը:

8) Վերահսկողական ոլորտի խնդիրները չեն սահմանափակվում միայն բողոքարկման և գնահատման հանձնաժողովների գործունեությամբ:

Առաջարկ 8. Գնումների ոլորտում ներդնել և անցկացնել հակակոռուպցիոն աուդիտ, ընդ որում՝ պետական գնումների պայմանագրերի կատարման ողջ ընթացքում:

Առաջարկ 9. Բոլոր խոշոր պայմանագրեր կնքած մասնակիցներին լրագրողական հանրույթի կողմից ենթարկել մանրագնին ուսումնասիրության:

10) Առկա են նաև այլ խնդիրներ **հրապարակայնության ապահովման և հաշվետվողականության** տեսանկյունից: Նախ, առկա չեն հաշվետվողականության միասնական ստանդարտներ: Օրինակ՝ շրջանակային համաձայնագրերի հրապարակման պարբերականությունը կանոնակարգված չէ, իսկ ամսական հաշվետվությունների որակը՝ խնդրահարույց: Բացի այդ, տրված գումարների համար հաշվետվողականության պահանջ նախատեսված չէ, օրինակ՝ տարեկան նախատեսվում է 290 աշակերտի համար մարզական ծառայություններ, սակայն բացակայում են ամրապնդող հիմքերը: Կամ, 2015թ.-ին առնվազն 27 ՊՈԱԿ-եր պետական բյուջեից թեև ֆինանսավորվել են, սակայն պորտալում այդ մասին տեղեկությունները բացակայում են:

Առաջարկ 10. Ներդնել հաշվետվողականության միասնական ստանդարտներ, որոնց համատեքստում պետական կառավարման մարմինները պարտավորված կլինեն իրենց կայքերում տեղադրել գնումների հաշվետվությունները գոնե տարեկան կտրվածքով:

Առաջարկ 11. Սահմանել տրված գումարների համար հաշվետվողականության պահանջ՝ ամրապնդող հիմքերի առկայություն:

Առաջարկ 12. Միջոցառումներ իրականացնել պատվիրատուների մոտ ապրանքային մնացորդների շարժն առցանց վերահսկելու ուղղությամբ: Վերոնշյալը կարող է խնդիրներ առաջացնել՝ կախված ապրանքի տեսակից, օրինակ շինանյութերի դեպքում, երբ ֆիզիկապես անհնար կլինի ճշգրիտ վերահսկել:

13) Էլեկտրոնային գնումների կայք-էջում բացակայում էին գնումների գործընթացի արդյունքում կնքված բոլոր պայմանագրերը, ինչպես նաև այդ պայմանագրերի կատարման արդյունքները (ընդունման-հանձնման ակտեր, կատարողական ակտեր, հաշիվ-ապրանքագրեր և այլն):

Առաջարկ 13. Գնումների գործընթացն առավել թափանցիկ դարձնելու նպատակով՝ առաջարկվեց վերոնշյալ բոլոր փաստաթղթերի, որոնք չեն պարունակում առևտրային գաղտնիքներ, հրապարակման պահանջ:

Ծանոթագրություն.

Հարկ է նշել, որ պետական գնումներին առնչվող իրավական մեխանիզմների վերաբերյալ վերոնշյալ իրավական կարգավորումները և դրանց կիրառությունը լավագույնս արտացոլված են սլովենական օրենսդրությունում, որոնք, ընդհանուր առմամբ, հավանության են արժանացել Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) կողմից:

Իրավական փաստաթղթերի հրապարակման հետ կապված առաջարկն արվեց Աղվերանում մայիսի 28-29 տեղի ունեցած քննարկման ժամանակ, որից հետո պետական մարմինների հետ կառուցողական բանակցությունների արդյունքում այն ընդունվեց և ներկայումս կատարվում է:

14) Էլեկտրոնային գնումների համակարգը պատշաճ չի գործում: Օրինակ՝ գնահատման հաշվետվությունը անգլերեն լեզվով փաստաթուղթ է և այն ամբողջությամբ հասկանալի չէ հայ օգտվողներին: Փաստաթուղթն իր մեջ չի ներառում նաև հիմնավորումներ մերժումների համար, որը սահմանված է ՀՀ օրենքով:

Բացի այդ, ոչ բոլոր դեպքերում են մրցութային հայտարարությունների փաստաթղթերը ստորագրված և կնքված, ինչը չի բացառում, որ դրանք փոփոխության ենթարկվեն:

Ավելի հաճախակի են դարձել դեպքերը, երբ պայմանագրում նշված չի ձեռքբերման վերջնաժամկետը (գրված է մինչև կատարման ավարտը) և/կամ շինարարության դեպքում որպես ավարտման ժամկետ նշվում է շինարարական մոնտաժման աշխատանքների հետ:

Կան նաև դեպքեր, երբ որպես հիմք ներկայացվում են միայն հաշիվ ապրանքագրերը կամ հանձնման և ընդունման ակտերը առանց պայմանագրերի:

Առաջարկ 14. Սահմանել գնահատման հաշվետվության հայերեն լեզվով թարգմանության պահանջ, ինչպես նաև հետևողական լինել, որպեսզի մերժման դեպքում հիմնավորումներ պարունակելու օրենսդրական պահանջը պահպանվի:

Առաջարկ 15. Հետևողական լինել մրցութային հայտարարությունների փաստաթղթերի ստորագրված և կնքված լինելու պահանջի պահպանմանը:

Առաջարկ 16. Բոլոր պայմանագրերի դեպքում հստակ սահմանել ձեռքբերման վերջնաժամկետը:

Առաջարկ 17. Բացառել առանց սկզբնական պայմանագրի միայն հաշիվ ապրանքագրերի կամ հանձնման և ընդունման ակտերի ներկայացումը:

18) Որպես ոլորտային խնդիր շարունակում է մնալ տնտեսվարող սուբյեկտների իրազեկվածության ցածր մակարդակը:

Առաջարկ 18. Ոլորտում էական առաջընթացի հասնելու համար՝ անհրաժեշտ է իրականացնել որոշակի գործողություններ իրազեկության մակարդակի բարձրացման ուղղությամբ: Սերգեյ Շահնագարյանի կողմից առաջարկվեց նախաձեռնել այս հարցի լուծման կապակցությամբ դրամաշնորհային ծրագրի կատարում: Այն կարող է ներառել գնումների ոլորտում կատարվող բոլոր մրցույթների վերաբերյալ, օրենսդրության փոփոխությունների և օրենսդրության կիրարկման հետ կապված հարցերով տնտեսվարող սուբյեկտներին պարզաբանումներ ներկայացնելու նպատակով պարբերաբար սեմինարների, կլոր սեղանների և

խորհրդատվությունների կազմակերպում և անցկացում, իրականացվող ծառայությունների թափանցիկության բարձրացում՝ բուկլետների, թուղթիկների հրատարակում և այլն:

Առաջարկ 19. Համապատասխան կայքում՝ gnumner.am-ում, պարբերաբար կատարել տեղեկատվության թարմացումներ և տեղադրել գնումների ոլորտում կատարվող բոլոր մրցույթները՝ առանց որևէ բացառությունների, և դրանց վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն՝ պահպանելով դրանց համար նախատեսված համապատասխան ժամկետները:

Առաջարկ 20. քայլեր ձեռնարկել gnumner.am պաշտոնական կայքի վերակառուցման, օգտատերերի համար մատչելի դարձնելու (user-friendly) ուղղությամբ: Օրինակ՝ մշակել ծրագիր, որը հնարավորություն կընձեռի յուրաքանչյուրին՝ էլեկտրոնային գնումների կայք-էջում հետաքրքրող պարամետրերը ընտրելու միջոցով ինքնուրույն ձևավորել հաշվետվություններ:

Իրավակիրարկման մասով նկատված խնդիրները շարունակական բնույթ են կրում. շարունակվում է փոխկապակցված ընկերություններից ձեռքբերման պրակտիկան, ինչը հետևանք է այն հանգամանքին, որ իրավախախտում իրականացրած անձանց համար նախատեսված պատասխանատվության միջոցները բավարար խիստ չեն: Օրինակ՝ ՀՀ պատտասխանության նախարարությունը հիմնադրել է ընկերություններ (Զինատ ՓԲԸ և Հենակետ ՓԲԸ), որոնց հետ ոչ մրցակցային հիմունքներով պայմանագրեր է կնքում:

Առաջարկ 21. Խիստ պատասխանատվություն նախատեսել այն պետական պաշտոնյաների համար, որոնք թույլ են ոլորտային իրավախախտումներ, ներառյալ՝ վերոնշյալ խախտումները: Հարկ է ևս մեկ անգամ նշել, որ միայն տուգանքը բավարար պատժիչ և զսպիչ մեխանիզմ չէ:

Առաջարկ 22. Խիստ պատասխանատվություն նախատեսել նաև տնտեսվարող սուբյեկտների համար ոլորտային իրավախախտումների համար, օրինակ՝ պայմանագրի կատարման ընթացքում թերությունների հայտնաբերման դեպքերի համար: Հարկ է նշել, որ ընկերությունների համար գնումների գործընթացում ոչ բարեխիղճ մասնակցելու համար «սև ցուցակ»-ում ընդգրկվելը բավարար սանկցիա չէ և պետք է սահմանել նաև այլ՝ առավել խիստ սանկցիաներ:

23) Տարբնույթ ոլորտներում կոռուպցիոն ռիսկեր են առաջանում գնումները միայն ծախսարդյունավետության տեսանկյունից իրականացնելիս: Օրինակ՝ դեղերի անհրաժեշտ տեսականու ձեռք բերմանը խոչընդոտում է մրցութային սկզբունքով դեղորայքի գնումները միայն ծախսարդյունավետության տեսանկյունից իրականացնելը: Այսինքն, հաշվի չի առնվում դեղորայքի որակական կողմը և ծագումնաբանական գործոնը՝ սահմանափակելով մրցութային հայտերում կոնկրետ ընկերությունների անվանումները նշելու խիստ կարևոր հնարավորությունը: Այսպես, ՀՀ առողջապահության նախարարի թիվ 1391-Ս հրամանի համաձայն՝ դեղերի ձեռք բերման ընթացքում բուժական արդյունավետության հավասար պայմանների դեպքում նախապատվությունը տրվում է ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված բուժման ստանդարտ սխեմաներում ընդգրկված, տվյալ պահին ավելի ցածր շուկայական գին ունեցող հայրենական արտադրության դեղերին: Նման պայմաններում մրցութային կարգով անհրաժեշտ քանակի և որակի դեղորայքի տեսականու ձեռք բերումը գրեթե անհնար է դառնում՝ առաջացնելով կոռուպցիոն ռիսկեր: Այս մասին նշված է նաև Մարդու իրավունքների պաշտպանի 2015թ. տարեկան հաղորդման մեջ:

Առաջարկ 23. Անհրաժեշտ է հստակեցնել գին-որակ հարաբերակցության հարցը:

24) Խնդիրները առկա են նաև **գնումների պլանավորման** ոլորտում: Մեր իրողության մեջ ոչ միշտ է, որ գնումների պլանը կրում է ծրագրային բնույթ և կազմվում՝ ելնելով միայն իր առջև դրված խնդիրների և գործառույթների կատարման ուղղված պետական կարիքներից:

Առաջարկ 24. Գնումների պլաններն այնպես կազմել, որպեսզի արտացոլվեն իրական պետական կարիքները: Օրինակ, ծառայողական մեքենաները տրամադրվեն այն պետական պաշտոնյաներին, որոնց գործունեության բնույթը չի նախատեսում միայն աշխատանք գրասենյակից:

Առաջարկ 25. Մինչև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից գնումների պլանների հրապարակումը իրականացել բաց հանրային քննարկումներ, որի ամփոփման արդյունքում էլ վերջնական ձևավորել պլանը: Վերոնշյալ փոփոխությունները հնարավոր է նախատեսել 2011թ. փետրվարի 10-ի Գնումների գործընթացի կազմակերպման մասին N 168-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու միջոցով:

26) Խնդրահարույց է նաև ՊՈԱԿ-ների ֆինանսավորման գործընթացը: Նախ, ՊՈԱԿ-ների հետ կնքված պայմանագրերի ուսումնասիրությունը չի պատասխանում այն հարցերին, թե որքան մարդու ուսուցում է իրականացվելու, ո՞վ է իրականացնում դասընթացների մոնիտորինգը, բացակայում է արդյունավետության չափողականությունը: Բացի այդ, հարց է առաջանում, թե ինչու՞ զրեթե յուրաքանչյուր մարմին ունի իր ուսուցումը իրականացնող ՊՈԱԿ: Ինչու՞ չեն օգտագործվում վերապատրաստման պետական կարողությունները /ՖՆ ուսումնական կենտրոն, Գնումների աջակցման կենտրոն, ՔՕԽ:

Առաջարկ 26. Բարձրացնել վերապատրաստման և ուսուցման ծառայությունների արդյունավետությունը, մասնավորապես՝ դրանք մեկտեղել մեկ հարթակում, ինչը հնարավորություն կտա տնտեսել մարդկային և այլ ռեսուրսներ, օրինակ՝ Պետական կառավարման ակադեմիայի ներքո:

Առաջարկ 27. Միջոցառումներ ձեռնարկել առցանց և հեռավար ուսուցման մոդուլներ պատրաստելու համար, ինչն էականորեն կմեծացնի տվյալ ենթաուղղության ծախսային արդյունավետությունը: Այսինքն, գնումների պլանավորում իրականացնելիս պետք է պատասխանել նման հարցերի և ծախսարդյունավետության տեսանկյունից լավագույն լուծումը գտնել:

28) Բացի այդ, պետական գնումների պլանավորման գործընթացում առկա է մեկ այլ խնդիր ևս՝ **գնային սահմանների՝ չափորոշիչների բացակայություն:**

Առաջարկ 28. Սահմանել հստակ չափորոշիչներ և առավելագույն գներ պետության կարիքների համար ձեռք բերվող հիմնական ապրանքների, ծառայությունների և աշխատանքների համար:

Օրինակ, առկա չեն կարգավորումներ և համապատասխան ստանդարտներ պետական կամ տեղական մարմինների կողմից **հուշանվերների** գնման դեպքում: Կարգավորումների բացակայության հետևանքով գնումներ կատարվում են միևնույն տնտեսվարողներից, գնային ազատ սահմաններում և այլն: Առաջարկվում է հստակ կարգավորումներ և չափանիշներ մշակել տվյալ խնդրի լուծման համար, օրինակ՝ հստակ սահմանել երկրների և հուշանվերների արժեքների ցանկը:

Հակակոռուպցիոն քննարկումների ժամանակ նշվեց, որ բացակայում են նաև հստակ կարգավորումներ **ավիատոմսերի** ձեռք բերման հարցում, մասնավորապես՝ կարգավորված չի անձի պաշտոնի աստիճանով, զբաղեցրած դիրքով պայմանավորված գործուղման ծախսերի տարբերակումը (այսինքն՝ սահմանված չէ, թե որ պաշտոնյան ավիատոմսերի և այլ

փոխադրամիջոցների ինչ կարգերից իրավունք ունի օգտվել): Առաջարկվում էր հստակ կարգավորել, թե որ պետական ծառայողը ինչից կարող է օգտվել գործուղումների ժամանակ:

Ծանոթագրություն.

Հարկ էր նշել, որ քննարկումների արդյունքում և Հայաստանի ՔՀԿ կոալիցիայի կողմից ավիատոմսերի վերաբերյալ խնդիրը բարձրաձայնելու արդյունքում վերոնշյալ խնդիրը իր լուծումը գտավ. գործելու է ավիատոմսերի ձեռք բերման միասնական համակարգ:

Առաջարկ 29. Իրականացնել քայլեր բորսայական սակարկության ապրանքները անմիջականորեն բորսայից ձեռք բերելու/կամ պայմանագրերը բորսայական գներից կախվածության դնելու մասով հնարավորությունը կիրառելու ուղղությամբ

Առաջարկ 30. Նպատակահարմար է որոշակի խումբ ստանդարտացված ապրանքների համար կիրառել rate.am-ի սկզբունքները, որի պարագայում գները կձևավորվեն ամենօրյա գնային առաջարկների հիման վրա, ինչն էլ հնարավորություն կընձեռի յուրաքանչյուր ապրանքային դիրքի համար թափանցիկ կերպով տեսնել նվազագույն գին առաջարկած մասնակցին: Քանի որ պետական գնումներում համատարած կիրառվում է նվազագույն գինը որպես հաղթողի ընտրության չափանիշ, ապա նպատակահարմար է քննարկել գնի նվազման աճուրդները /reduction auction/:

31) Խնդիրներով լի է նաև **շրջանակային համաձայնագրերի** մրցույթների գործընթացը: Նախ, շրջանակային համաձայնագրերի մրցույթներում առկա է բավական բարձր կենտրոնացվածություն, օրինակ՝ շրջանակային համաձայնագրերի գնումներում բավական մեծ տեսակարար կշիռ ունի ՀՀ ոստիկանությունը:

Բացի այդ, առկա է մեծ խզում շրջանակային համաձայնագրերի ամսական տվյալների հանրագումարի արդյունքում ստացվող և ԳԱԿ-ի հրապարակած տվյալների միջև:

Հարկ է նաև նշել, որ անհասկանալի է, թե ինչու՞ են մի շարք գնումներ իրականացվում շրջանակային համաձայնագրերով, օրինակ՝ մեղալների գնումը այն դեպքում, երբ շուկայում առկա է Գնումն-1 ոսկերչական գործարանը, որը տվյալ գնման ուղղության գծով միակ հայտ ներկայացնողն է: Համանման բացատրությունների կարիք կա 02 շաբաթաթերթի մասով ոստիկանության իրականացրած մրցույթների վերաբերյալ:

Ուշագրավ է նաև այն, որ սպորտային համազգեստի մատակարարման մրցույթները բացառապես հաղթում է Էլիտ-Սպորտ ընկերությունը, որի հիմնադիրը հանդիսանում է հենց պատվիրատուն՝ Սպորտի և երիտասարդության նախարարությունը:

Հարկ է նշել, որ միևնույնի մասին կարող ենք խոսել ՊՈԱԿ-ների մասով: Հարց է առաջանում, թե ինչու՞ ՊՈԱԿ-ների ընտրությունը կրկին չի կարելի իրականացնել մրցակցային հիմունքներով: Նշենք, որ պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման ժամկետ էր սահմանվել ապրիլ-դեկտեմբերը, այսինքն որևէ հրատապություն չէր կարող խանգարել մրցութային գործընթացներ կիրառելուն նաև ՊՈԱԿ-ների նկատմամբ:

Բացի այդ, հստակեցված չեն ՊՈԱԿ-ին տրամադրվող ֆինանսավորման հիմքերը: Օրինակ՝ հասկանալի չէ, ինչու խոշորագույն ֆինանսավորում ստացող ավելի քան 3 մլրդ դրամ ստացող ԳԱԱ-ի արդյունքները չեն կարող ձևավորվել մրցակցային գործընթացների արդյունքում:

Առաջարկ 31. Քայլեր ձեռնարկել շրջանակային համաձայնագրերի մրցույթներում առկա բարձր կենտրոնացվածությունը նվազեցնելու ուղղությամբ, այն դեպքերում, ինչպես օրինակ մեղալների գնումն էր, երբ առկա է միայն մեկ հայտ ներկայացնող, գնումները կարգավորել մեկ անձից գնումների ընթացակարգով:

Առաջարկ 32. Ուսումնասիրել շրջանակային համաձայնագրերի ամսական տվյալների հանրագումարի արդյունքում ստացվող և ԳԱԿ-ի հրապարակած տվյալների միջև տարբերությունները:

Առաջարկ 33. ՊՈԱԿ-ների ընտրությունը անցկացնել մրցակցային գործընթացների արդյունքում: Հաշվի առնելով, որ նույն նպատակով երբեմն տրամադրվում են դրամաշնորհներ, հնարավոր տարբերակ է դրանք թվայնացնել՝ օգտագործելով նաև ՀԿ ներուժը:

Առաջարկ 34. ՊՈԱԿ-ների ֆինանսավորումը անցկացնել մրցակցային գործընթացների արդյունքում:

Առաջարկ 35. Թարգմանչական ծառայությունները կամ կենտրոնացնել, կամ ամբողջովին ապակենտրոնացնել և իրականացվեն մրցակցային եղանակով:

Առաջարկ 36. Անշարժ գույքի վարձակալությունը իրականացնել կենտրոնացված պետական մարմնի կողմից:

6) «Պետական գույքի մասնավորեցման և գույքը գերակա հանրային շահ ճանաչելու գործընթացում առկա կոռուպցիոն ռիսկերը ՀՀ-ում».

Պետական գույքի մասնավորեցման և գույքը գերակա հանրային շահ ճանաչելու գործընթացում առկա կոռուպցիոն խնդիրները քննարկվել են 2016 թվականի հուլիսի 20-ին Կապանում «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հետ համատեղ, Եվրոպական միության ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ կազմակերպված «Պետական գնումների և պետական գույքի մասնավորեցման ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը» խորագրով հակակոռուպցիոն միջոցառման ընթացքում: Հակակոռուպցիոն միջոցառմանը մասնակցել են 40 անձ, որից՝ 21 կին, 19 տղամարդ: Մասնակիցների շարքում էին՝ Սյունիքի փոխարգայետ՝ **Վարդան Դավթյանը**, Կապանի քաղաքապետ **Աշոտ Հայրապետյանը**, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հակակոռուպցիոն ծրագրերի համակարգող **Նաիրա Գյուլնազարյանը**, ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի պետական ներքին ֆինանսական հսկողության և պետական գնումների մեթոդաբանության վարչության գնումների գործընթացի կարգավորման ու համակարգման բաժնի պետ **Վահե Մահտեսյանը** և այլք:

Խնդիրներ և առաջարկություններ

1. «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով փորձ է կատարվել սահմանել, թե գերակա հանրային շահը ի՞նչ նպատակներ կարող է հետապնդել՝ տալով բավականին ընդգրկուն մեկնաբանություն, ինչը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր դեպք ներառել այդ հասկացության ներքո: Հարկ է նշել, որ գերակա շահ ճանաչվում է ինչպես ֆիզիկական անձանց, այնպես էլ՝ իրավաբանական անձանց, այդ թվում՝ տնտեսվարող սուբյեկտների գույքը:

Բացի այդ, թվարկված են միմիայն նպատակների բնույթը՝ գերակա հանրային շահը կարող է հետապնդել պետության պաշտպանության, պետության և հասարակության անվտանգության ապահովման, կրթության, առողջության սպորտի զարգացման ապահովման և այլ նպատակներ:

Առաջարկ 1. Փոփոխություն կատարել «գերակա հանրային շահ»-ի սահմանման մեջ և թվարկել ու ներառել հստակ կառույցների, ոլորտների անվանումները, որոնց գործունեության բարելավումն իսկապես արտացոլում է հանրության գերակա շահերը:

Առաջարկ 2. Սահմանել, որ յուրաքանչյուր դեպքում, ձեռքբերվող սեփականությունը բացառիկ գերակա հանրային շահ ճանաչելով, պետությունը պարտավոր է հիմնավորել, որ այդ շահը օտարվող սեփականության սեփականատերերի շահից գերակայող է, և նպատակի իրագործումն անհնար է առանց կոնկրետ այդ սեփականության ձեռքբերման: Ընդ որում, եթե ձեռք է բերվում մի քանի սեփականատերերի գույք, ապա այդ հիմնավորումը պետք է տրվի նրանցից յուրաքանչյուրի գույքի ձեռքբերման կապակցությամբ:

3. «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածում, որը ներկայացնում է գերակա հանրային շահ ճանաչելու

կառավարության որոշման համար անհրաժեշտ հիմքերը և փաստաթղթերը, բացակայում է օտարման ենթակա տարածքի/գույքի համար պատրաստված նախագիծը ներկայացնելու պայմանը:

Առաջարկ 3. Օտարման ենթակա տարածքի/գույքի համար պատրաստված նախագիծը կարելի է տեսականորեն նախատեսել հոդվածի 2-րդ կետի գ) բաժնում, այն է՝ «այլ անհրաժեշտ տվյալներ», սակայն այս անորոշ ձևակերպումը խոցելի է դարձնում նախագիծ ներկայացնելու պահանջի օրինականությունը, ուստի անհրաժեշտ է օրենքով հստակ ամրագրել այն, որպեսզի օտարման որոշման անբեկանելի նախապայման հանդիսանա:

4. Թեև բացի տարածքի/գույքի արժեքի գումարի փոխհատուցումից, օրենքով սահմանված է նաև հավելյալ որոշակի այլ գումար՝ որպես այսպես կոչված «բարոյական փոխհատուցում», քանի որ գույքի սեփականատարերը ի վերջո ստիպված են լինում լքել իրենք բնակավայրերը կամ բիզնեսները, սակայն վերջինս չափը այդքան էլ հուսադրող չէ:

Առաջարկ 4. Քննարկել և սահմանել առավել բարձր շեմ՝ որպես այսպես կոչված «բարոյական փոխհատուցում»:

5. Գույքը գերակա շահ ճանաչելու գործընթացում պատահում են դեպքեր, երբ իրացնող սուբյեկտը լուծարվում է, որի հետևանքով գույքի սեփականատերերին փոխհատուցում տրամադրելու գործընթացը մնում է կիսատ:

Առաջարկ 5. Անհրաժեշտ է ձևակերպել մեխանիզմներ մշակել, օրինակ՝ պայմանագիրը դարձնել եռակողմ՝ ներառելով նաև պետությանը, որպեսզի չեզոքացվեն իրացնող սուբյեկտի լուծարման հետ կապված ռիսկերը:

6. 1998թ. փետրվարի 27-ին Սահմանադրական Դատարանի կողմից կայացված որոշման մեջ ամրագրված է սեփականատիրոջ անհամաձայնության դեպքում մասնավոր սեփականության օտարման կառավարության որոշման համար կոնկրետ անշարժ գույքի վերաբերյալ առանձին օրենք ընդունելու հանգամանքը:

Առաջարկ 6. Վերականգնել վերոնշյալ ՄԴՈ-ում նշված պահանջը՝ կոնկրետ անշարժ գույքի վերաբերյալ առանձին օրենք ընդունելու վերաբերյալ: Այս մեխանիզմը լավագույնս կլուծի գործընթացում սեփականատիրոջ իրավունքների պահպանման և անշարժ գույքի արդարացի գնահատման խնդիրը:

7. Բազմիցս վեր է հանվում այն հարցը, որ գույքը գերակա հանրային շահ ճանաչվելու դեպքում անշարժ գույքի գնահատման ոլորտում չկա ազատ մրցակցություն: Պատճառ է հանդիսանում նաև այն հանգամանքը, որ գույքի գնահատմամբ զբաղվող ընկերությունների լիցենզավորման գործընթացը, դրա հիմքերը և նպատակը բավարար կերպով ուսումնասիրված չեն և բացակայում է ոլորտը կանոնակարգող օրենք:

Առաջարկ 7. Մշակել և ընդունել փորձագիտական կենտրոններին վերաբերող ՀՀ օրենքի իրականացնել վիճակագրություն վերոնշյալ հարցով:

8. Գույքի մասնավորեցման ժամանակ գույքի գնահատման ընթացքում կիրառվում են համեմատական, եկամտային կամ ծախսային մեթոդներ: Օրինակ՝ Մարզահամերգային Համալիրի դեպքում ծախսային մեթոդն էր կիրառվել, որի հետևանքով փորձագետները նշում էին, որ 60 միլիոնի փոխարեն 30 մլն դոլարով այն պետք է օտարվեր:

Առաջարկ 8. Գույքի մասնավորեցման ժամանակ գույքի գնահատման ընթացքում կիրառել այն մեթոդը, որը ՀՀ-ի համար ֆինանսապես առավել շահավետը կլինի:

9. ՀՀ-ում չի արգելվում մասնավորեցնել ՀՀ գույքը ի օգուտ օֆշորներում գրանցված ընկերությունների:

Առաջարկ 9. Սահմանել օֆշորային ընկերությունների և նրանց մասնաճյուղերի կողմից ուղղակի կամ անուղղակի կերպով բաժնետոմսեր ձեռք բերելու արգելք վարկային, ապահովագրական, կենսաթոշակների ապահովագրման հաստատություններում, հեռախոսային կապի, ռադիոյի և հեռուստատեսության օպերատորներում և այլ հիմնական տնտեսական բնագավառներում, որտեղ հանրային ֆոնդերը կուտակված են՝ անկախ մասնակցության տոկոսից:

Օանթագրություն. Համանման կարգավորում արդեն գործում է Բուլղարիայում: 01.01.2014թ.-ի օրենքով սահմանվեց մասնակցության արգելք օֆշորային ընկերությունների և նրանց մասնաճյուղերի համար հիմնական տնտեսական 28 բնագավառներում, որտեղ հանրային ֆոնդերը կուտակված են: Օֆշորային ընկերությունները և նրանց մասնաճյուղերը ոչ միայն չեն կարող մասնակցել պետական գնումներին, այլև չեն կարող ձեռք բերել ուղղակի կամ անուղղակի կերպով բաժնետոմսեր վարկային, ապահովագրական, կենսաթոշակների ապահովագրման հաստատություններում, հեռախոսային կապի, ռադիոյի և հեռուստատեսության օպերատորներում և այլն: Սահմանափակումները տարածվում են անկախ մասնակցության տոկոսից:

7) ՀՀ բիզնես ոլորտում առաջարկվող հակակոռուպցիոն համակարգային բարեփոխումները

1) Ինչպես գիտենք ՀՀ օրենսդրությամբ սահմանված է ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելք պաշտոնատար անձանց համար ՀՀ քրեական օրենսգրքի 310-րդ հոդվածով սահմանված կարգով, որի համաձայն՝ *պաշտոնատար անձի կողմից, օրենքով սահմանված արգելքին հակառակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպություն հիմնադրելը կամ անձամբ կամ վստահված անձի միջոցով այդպիսի կազմակերպության կառավարմանը մասնակցելը, եթե այդ արարքները կապված են այդպիսի կազմակերպությանն արտոնություններ և առավելություններ տրամադրելու կամ այլ ձևով հովանավորելու հետ պատժվում է որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:*

Վերոնշյալը ուղղակիորեն վերաբերում է թե հանրային, թե մաքսային, թե պետական գնումներին ոլորտում, թե թույլտվությունների և լիցենզիաների տրամադրման ոլորտում թ թե այլ համանման ոլորտներում աշխատող պաշտոնատար անձանց: Նույնիսկ անուղղակիորեն, երբեմն պետական գնումներին մասնակցում են ընկերություններ, որոնց սեփականատերերը հանդիսանում են ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք: Սակայն, տարաբնույթ սխեմաների միջոցով վերոնշյալ՝ օֆշորային գոտիներում գրանցված իրավաբանական անձանց իրական սեփականատերեր հանդիսանում են ՀՀ պաշտոնատար անձինք:

Հետևաբար, օրենսդրության կատարելագործմանն ուղղված աշխատանքներ կատարելու կարիք կա, քանի որ ներկայիս պատժատեսակի առկայության դեպքում հնարավոր է տուգանք վճարել, սակայն տուգանքի գումարը կարող է անհամեմատելի լինել այն ահռելի գումարների հետ, որը պաշտոնատար անձը ձեռք է բերել՝ վերոնշյալ օրենսդրական նորմի պահանջներին չենթարկվելով:

Առաջարկ 1. Որպես պատժատեսակ նախատեսել նաև «*օրենքով արգելված ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետևանքով ձեռք բերված գույքի բռնագրավում*», որն համապատասխանում է «*in rem*» հայեցակարգին:

Ծանոթագրություն.

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի շարք երկրներ, որոնք պայքար են մղում կոռուպցիայի դեմ ներպետական օրենսդրությունում ամրագրել են բռնագրավման «in-rem» հայեցակարգը, որը նախատեսում է իրավական կարգով կոռուպցիոն գործով մեղադրյալից բռնագանձել բոլոր այն ֆինանսական միջոցները, արժեթղթերը, անշարժ և շարժական գույքը, որոնք դատական կարգով կճանաչվեն օրինական կարգով մեղադրյալի ստացված եկամուտներին չհամապատասխանող: Այս հայեցակարգը անհրաժեշտ է կիրառել ոչ միայն մեղադրյալի այլ նաև նրա հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև իր հանցակիցների, օժանդակող անձանց նկատմամբ:

Միջազգային պրակտիկայում ապացուցման բեռը ընկած է կոռուպցիոն հանցագործության մեջ մեղադրվող անձի ուսերին, մեղադրյալն ինքն է պարտավոր ապացուցել իր ֆինանսական միջոցների, արժեթղթերի, անշարժ և շարժական գույքի օրինական ծագման փաստը: Այս հայեցակարգն օգտագործվում է կոռուպցիոն ճանապարհներով ձեռքբերված

եկամուտները պետությանն ու հասարակությանը վերադարձնելու նպատակով: Բռնագրավման նման հայեցակարգ է գործում, օրինակ ԱՄՆ-ում, Նորվեգիայում, Շվեյցարիայում, Իտալիայում և այլն:

ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 31-րդ հոդվածը սահմանում է նորմեր **վնասի հատուցման վերաբերյալ**, համաձայն որի՝ *Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք, իր ներքին օրենսդրության սկզբունքներին համապատասխան, կարող են անհրաժեշտ լինել, որ իրավաբանական կամ ֆիզիկական անձինք, որոնք վնաս են կրել կոռուպցիոն որևէ արարքի հետևանքով, իրավունք ունենան այդ վնասի համար պատասխանատվություն կրող անձանց նկատմամբ վարույթ հարուցել փոխհատուցում ստանալու համար:*

ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 31-րդ հոդվածը սահմանում է նորմեր՝ **սառեցնելու, առգրավելու և բռնագրավելու վերաբերյալ**: Համաձայն սույն հոդվածի՝

1. *Յուրաքանչյուր Մասնակից պետություն առավելագույն չափով, որը հնարավոր է իր ներքին իրավական համակարգի շրջանակներում, պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել բռնագրավման հնարավորությունն ապահովելու համար՝*

ա) հանցագործություններից ստացված եկամուտների, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան, կամ այն գույքի, որի արժեքը համապատասխանում է այդպիսի եկամուտների արժեքին.

բ) գույքի, սարքավորման և այլ միջոցների, որոնք օգտագործվել են կամ նախատեսվել են իրավախախտումներ կատարելիս օգտագործելու համար, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան:

2. *Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել սույն հոդվածի 1-ին կետում թվարկվածներից ամեն մեկի բացահայտման, հետամուտ լինելու, սառեցնելու կամ առգրավելու հնարավորության ապահովման համար՝ հետագա բռնագրավման նպատակով:*

3. *Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր ներքին օրենսդրությանը համապատասխան, պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել իրավասու մարմինների կողմից սառեցված, կալանված կամ բռնագրավված գույքի կառավարումը կարգավորելու համար, որը նշված է սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերում:*

4. *Եթե հանցագործություններից ստացված այդպիսի եկամուտները ամբողջությամբ կամ մասնակիորեն վերածվել կամ փոխակերպվել են այլ գույքի, ապա սույն հոդվածում նշված միջոցները պետք է կիրառվեն այդպիսի գույքի նկատմամբ:*

2) ՀՀ ներպետական օրենսդրությամբ ամրագրված չեն **ազդարարների պաշտպանության մեխանիզմները և «qui tam» հայեցակարգը**, որը կիրառելի է վերոնշյալ բոլոր թիրախային ոլորտների համար:

Ծանոթագրություն.

Այսօր դեռ միջազգային մակարդակով չի ձևավորվել մեկ միասնական իրավական պատկերացում կապված «whistleblowing» տերմինի հետ, որն թարգմանաբար նշանակում է հակաօրինական գործողությունների վերաբերյալ հաղորդում: Ըստ Black's Law Dictionary-ի whistleblower է համարվում այն աշխատակիցը, ով հաղորդում է գործատուի սխալ արարքները իրավապահ մարմինների: Այսինքն վերոնշյալ տերմինը կիրառվում է և հանրային, և մասնավոր սեկտորի համար:

Անձինք, ովքեր հայտնում են տեղեկություններ կոռուպցիայի կամ այլ անօրինական գործողությունների վերաբերյալ, ունեն շատ մեծ դեր կոռուպցիոն գործողությունների և պաշտոնական լիազորությունների չարաշահման բացահայտման վերաբերյալ: Սակայն գործելով ի շահ հանրության՝ վերջիններս վտանգի տակ են դնում իրենց սեփական անվտանգությունը: Կոռուպցիայի դեմ պայքարում կարևոր նշանակություն ունի տեղեկատվություն հաղորդող անձանց պաշտպանության մեխանիզմների ներդրումը:

Նման պաշտպանության տրամադրում նախատեսված է ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի 33-րդ հոդվածով, ինչպես նաև Եվրոխորհրդի Կոռուպցիայի մասին քրեական և քաղաքացիական իրավունքների մասին կոնվենցիաներով, Աշխատանքի միջազգային կազմակերպության Աշխատանքի ավարտի մասին կոնվենցիայով:

Ազդարարների պաշտպանության ինստիտուտի վերաբերյալ առկա են նաև ԵԽԽՎ 2 բանաձևեր՝ 2009թ. սեպտեմբերի 14-ին ընդունված բանաձևը, որը առհասարակ պաշտպանության մեխանիզմների ներդրման մասին է առհասարակ և հանրային, և Մասնավոր ոլորտներում, և 2015թ. մայիսի 19-ին ընդունված բանաձևը, որը պետության պաշտպանության ներքո է դասում նաև ազգային անվտանգության և հետախուզական տեղեկատվության հավաքագրման գործակալության համար աշխատող անձանց, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի մասնակից պետություններում ապաստանի տրամադրվող այն դեպքում, երբ նրանք հետապնդվում են իրենց հայրենիքներում:

Ազդարարների պաշտպանության մասին գործում են նաև 2014թ. Նախարարների խորհրդի հանձնարարականը, ինչպես նաև ՄԻԵԴ-ը *Guja v Moldova, Vogt v Germany, Wille v Liechtenstein, Babar Ahmed and others v the United Kingdom, Fuentes Bobo v Spain գործերում*: Այն արդյունավետ կիրառվում է հակակոռուպցիոն պայքար մղող մի շարք պետությունների կողմից, օրինակ՝ Միացյալ Նահանգներ, Կանադա, Անգլիա և այլն:

«*Qui tam*» հայեցակարգի համաձայն whistleblower-ները դատարանում հաջողության հասնելու և վատնված պետական միջոցները բյուջե վերադարձնելու դեպքում կստանան «հայցի գնի» որոշակի մաս, օրինակ ԱՄՆ-ում պարզևատրումը կարող է կազմել նման կարգով բյուջե վերադարձված գումարի 15-30%-ը:

Վերոնշյալ հայեցակարգի առավելությունը կայանում է նրանում, որ այն մի կողմից քաղաքացու միջոցով փորձում է վերականգնել արդարությունը և պետության միջոցները, մյուս կողմից շահագրգռում է հասարակության անդամներին ավելի զգոն լինել կոռուպցիայի բացահայտման և վերացման գործում:

Առաջարկ 2. Ժողովրդավարական հասարակության կառուցմանը, կոռուպցիայի իսպառ վերացմանը նպաստելու, հասարակության տարբեր խավերին՝ կոռուպցիայի միասնական պայքարին շահագրգռող մասնակից դարձնելու նպատակով օրենքով սահմանել ազդարարների պաշտպանության մեխանիզմներ, ինչպես նաև՝ սահմանել անանուն հաղորդումների ներկայացման հնարավորություն այնպիսի առաջատար մոտեցումների և համակարգերի հիման վրա, ինչպիսիք էին WhistleB-ն, Tor-ը և այլն, օր՝ ԱՄՆ, Արգենտինա, Գերմանիա, Ավստրալիա, Չինաստան: Ներպետական իրավական համակարգում նախատեսել նաև «*qui tam*» հայեցակարգը այն դեպքերի համար, երբ ազդարարները համաձայն են ներկայանալ, իսկ անանուն ազդարարների համար ևս նախատեսել խրախուսման միջոցներ՝ էլեկտրոնային գումարների տեսքով:

3) Ներկայումս չեն գործում ՔՀԿ-Բիզնես-Կառավարություն ոլորտային *ad-hoc* (իրավիճակային) աշխատանքային խմբեր, որոնք իրենց հանդիպումները կիրականացնեն

հաճախակի հիմունքներով և կառուցողական բանակցությունների շնորհիվ վեր կհանեն խնդիրները և լուծումներ կառաջարկեն:

Առաջարկ 3. Ստեղծել ՔՀԿ-Բիզնես-Կառավարություն ոլորտային *ad-hoc* (իրավիճակային) աշխատանքային խմբեր, որոնք համատեղ կքննարկեն՝ հարկային, մաքսային, պետական գնումների, ազատ տնտեսական մրցակցության, թույլտվությունների և լիցենզիաների տրամադրման, պետական գույքի կառավարման ոլորտներում առկա խնդիրները և համատեղ կլուծեն դրանք:

4) Այսօր ՀՀ-ում գործունեություն ծավալող ՓՄՁ սուբյեկտները, առավել ևս գերփոքր բիզնեսը առօրյա ռեժիմով առընչելով խնդիրների հետ՝ կապված պատկանող մարմինների գործունեության կամ անգործության հետ, չունի այն վստահելի միջնորդ օղակը ում կկարողանա բարձրաձայնել իր խնդիրները և լիահույս կլինի, որ դրանք կլուծվեն:

Խնդիրն այն է, որ Բիզնես օմբուդսմենի ինստիտուտի ներդրման հարցն արդեն մի քանի տարի է, ինչ բարձրաձայնվում է բիզնես շահերը ներկայացնող կառույցների կողմից և՛ դեռևս մնում անպատասխան: Թեև նոր ձևավորված կառավարության ծրագրում տեղ գտավ այս ինստիտուտի ներդրման մասին դրույթ, սակայն, այն ժամկետները, որոնցով պլանավորվում է գործընթացի իրականացումը, մեր խորին համոզմամբ, ուշացնում են գործընթացը և երկարատև են: Վերջինս կծառայի թե հարկային, թե մաքսային և թե այլ բիզնես ոլորտներում:

Առաջարկ 4. ՀՀ-ում ներդնել **Գործարար շահերի պաշտպանի ինստիտուտը:**

Ծանոթագրություն .

Բիզնես օմբուդսմենի ինստիտուտը հաջողությամբ գործում է մի շարք երկրներում, այդ թվում նաև՝ Ռուսաստանի դաշնությունում 7 հարևան Վրաստանում: Բիզնես օմբուդսմենը Վրաստանում անկախ կառույց է, որը հաշվետու է միայն վրացական պառլամենտին:

ՀՀ-ում գործարար շահերի պաշտպանի գրասենյակի ներդրման մասին ուսումնասիրությունները վերջին անգամ կատարվել են նախորդ կառավարության նախաձեռնությամբ՝ ներգրավելով ՎՋԵԲ միջազգային փորձագետներ, ովքեր մասնակից են եղել նմանատիպ գրասենյակների ներդրմանը Ուկրաինայում և Վրաստանում: Տվյալ փորձագետների և ՀՀ կառավարության ջանքերով մշակվել էր օրենքի նախագիծ, որը շրջանառվել էր գերատեսչություններից և հասարակական սեկտորից կարծիքների հավաքագրման համար, այնուհետև այդ գործընթացը ինչ-ինչ պատճառներով դադարեցվել էր: Նշենք նաև, որ 2015թ.-ի մայիսին ՎՋԵԲ երևանյան նոր գրասենյակի բացման արարողության ներկա գտնվող ՎՋԵԲ նախագահ պարոն Սումա Չակրաբարտին հայտարարեց Բիզնես Օմբուդսմենի գրասենյակի ներդրման իրենց պատրաստակամության և ՀՀ կառավարության հետ այդ հարցում համաձայնության գալու մասին: Նույն ժամանակահատվածում՝ մայիսի 14-ից 15-ը Թբիլիսիում տեղի ունեցած ՎՋԵԲ տարեկան ժողովում Հայաստանին նվիրված նստաշրջանում Բիզնես Օմբուդսմենի գրասենյակի ներդրման մասին հայտարարեց ՀՀ էկոնոմիկայի նախարարը, որպես ներդրումների ներգրավման երաշխիքային կառույց:

5) ՀՀ-ում պատկանող մարմինների հանդեպ թե քաղաքացիների և թե տնտեսվարողների կողմից անվստահության մթնոլորտը պայմանավորված է այն հանգամանքով, որ համապատասխան պետական կառույցները **ծառայողական քննություններ** հետևողականորեն չեն իրականացնում, որի հետևանքով ենթարկվում պատասխանատվության իրավազանց պաշտոնատար անձանց և **ծառայողական քննությունների արդյունքները չի հրապարակվում ՋԼՄ-ներով:** Այնինչ, վերջինս կհետապնդեր 2 նպատակ: Նախ, պաշտոնատար անձինք, տեսնելով, որ ոչ միայն իրենց կողմից կատարված հակաօրինական վարքագծի համար

պատասխանատվության են ենթարկվում, այլն՝ հրապարակավ, իրենց աշխատանքն ու դիրքը չկորցնելու համար կփորձեն չկատարել նման խախտումներ: Բացի այդ, հասարակության վստահությունը կբարձրանա, քանի որ կտեսնի, որ անպատժելիության մթնոլորտ չկա:

Առաջարկ 5 Իրականացնել ծառայողական քննություններ, իրավազանցների նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ և քննությունների արդյունքների ՁԼՄ-ներով հրապարակման պահանջ սահմանել:

Ծանոթագրություն.

Քննարկումների ընթացքում պարզ դարձավ, որ հարկային ոլորտում հեռուստատեսությամբ առկա է ծառայողական քննությունների արդյունքների հրապարակայնացման փորձ:

6) ՀՀ-ում հակակոռուպցիոն քաղաքականությունները ձևավորվում են, սակայն վերջիններս հարմարեցված չեն հանրային կառույցների կողմից տրամադրված ծառայություններին խոչընդոտող գործոնների չեզոքացմանը: Ծառայությունների մատուցման ուսումնասիրությունները (Service delivery survey) օգտագործվում են, որպեսզի տեղեկություններ ձեռք բերվեն սպասարկման որակի մատուցման խոչընդոտող գործոնների վերաբերյալ: Ընդգրկում է ծառայությունների մատուցման բազմաթիվ ասպեկտներ և դուրս հանում անարդյունավետ ծառայությունների մատուցման պատճառները: Նիկարագուայում վերջիններս բարեփոխումների հիմք հանդիսացան: Կիրառելի է վերոնշյալ թիրախային բոլոր ոլորտների ուղղությամբ:

Առաջարկ 6. ՀՀ վերոնշյալ թիրախային ոլորտներում կիրառել **ծառայությունների մատուցման ուսումնասիրությունները:**

7) Գաղտնիք չէ, որ ՀՀ-ում հանրային ծառայողների աշխատավարձերը իրականում շատ ցածր են և ոչ մոտիվացնող: Տեսության մեջ շատ է քննարկվում, որ կոռուպցիան ծնող պատճառներից մեկը ցածր վարձատրությունն է: Վերջինս վերաբերվում է ցանկացած ոլորտի, լինի կրթական, թե՛ առողջապահական: Բիզնես ոլորտն էլ բացառություն չի կազմում:

Առաջարկ 7. Հանրային ծառայողների համար օրենսդրությամբ սահմանել իրենց կողմից կատարված աշխատանքների արդյունքների չափման առարկայական ցուցանիշներ և դրանց հիման վրա կառուցել աշխատավարձերի բոնուսային համակարգ:

Ծանոթագրություն.

Կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային փորձը վկայում է այն մասին, որ պետական մակարդակով աշխատավարձերի բարձրացումը կարևոր նախադրյալներից մեկն է կոռուպցիան արմատախիլ անելու գործում վերոնշյալ բոլոր ոլորտներում: Հակակոռուպցիոն պայքարում Մինգապուրը, Չինաստանը և մի շարք այլ երկրներ բացի կոռուպցիոն գործերով խիստ պատիժներ՝ ընդհուպ մինչև մահապատիժ սահմանելն ու կիրառելը, սահմանում են նաև բարձր աշխատավարձեր և պարգևատրում են այն ծառայողներին, ովքեր անկաշառ ծառայել են երկրին:

8) ՀՀ ներպետական օրենսդրության մեջ բացակայում են կոռուպցիայի հասկացության ու հատկանիշների սահմանումները: Բացի այդ, կոռուպցիոն հանցագործությունները սահմանված են ոչ թե օրենքի մակարդակով, այլ՝ ՀՀ Գլխավոր դատախազի համապատասխան որոշմամբ: Կա թյուր կարծիք հասարակության մեջ, որ կոռուպցիա է համարվում միայն կաշառք տալն ու վերցնելը: Օրինակ, շատ հաճախ հարկային, մաքսային և այլ մարմինների կողմից իրենց ծառայողական պարտականությունների դիմաց թանկարժեք նվերներ ստանալը վերջիններս չեն դիտում որպես կոռուպցիոն երևույթներ:

Առաջարկ 8. Օրենսդրորեն ամրագրել կոռուպցիայի հասկացությունը, նրա հատկանիշները և օրենքի մակարդակով սահմանել կոռուպցիոն հանցագործությունների ցանկը:

9) Ներկայումս «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով գույքի և եկամուտների **հայտարարագրեր** չեն ներկայացնում պետական գնումների, հարկային, մաքսային, թույլտվությունների և այլ ոլորտում աշխատող այն անձինք, որոնք ուղղակիորեն կարող են ազդել պետական գնումներին մրցույթի արդյունքների վրա կամ հարկային և մաքսային և այլ արտոնություն տրամադրել և այլն: Վերջիններիս գործունեության ընթացքում առկա է մարդկային գործոն, որն իր հետ բերում է կոռուպցիոն ռիսկեր:

Առաջարկ 9. Լայնացնել հայտարարագրման պարտականություն ունեցող անձանց շրջանակը և վերոնշյալ համակարգերի պետական ծառայողներին ներառել վերջինիս մեջ:

10) ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է սահմանում միայն ֆիզիկական անձանց նկատմամբ:

Առաջարկ 10 Բիզնես ոլորտում կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարելու նկատառումներից ելնելով՝ իրավաբանական պատասխանատվություն սահմանել նաև իրավաբանական անձանց նկատմամբ:

Ծանոթագրություն.

ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 26-րդ հոդվածը նախատեսում է իրավաբանական անձանց պատասխանատվությունը: Սույն հոդվածը մասնավորապես սահմանում է, որ

«1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք, իր իրավական սկզբունքների համաձայն, կարող են անհրաժեշտ լինել իրավախախտումներին մասնակցելու համար իրավաբանական անձանց պատասխանատվություն սահմանելու համար, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան:

2. Մասնակից պետության իրավական սկզբունքների պահպանման պայմանով՝ իրավաբանական անձանց պատասխանատվությունը կարող է լինել քրեական, քաղաքացիաիրավական կամ վարչական:

3. Նման պատասխանատվությունը չպետք է խախտի իրավախախտումներ կատարած ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվությունը:

4. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, մասնավորապես, պետք է ապահովի սույն հոդվածին համապատասխան պատասխանատվության ենթարկվող իրավաբանական անձանց նկատմամբ արդյունավետ, համաչափ և զսպող ներգործություն ունեցող քրեական կամ ոչ քրեական պատժամիջոցների, ներառյալ դրամական պատժամիջոցների կիրառումը»:

Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտը ամրագրված է մի շարք պետությունների օրենսդրությունում՝ Ավստրիա, Անգլիա, Բելգիա, Դանիա, Հունգարիայում, Իսրայելում, Իռլանդիայում, Իսլանդիայում, Կանադայում, Չինաստանում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում և այլուր:

Սակայն կան նաև երկրներ, որոնց շարքին են դասվում Գերմանիան, Իսպանիան, Ռուսաստանի Դաշնությունը, Հայաստանի Հանրապետությունը, որոնք կոնվենցիայի սույն հոդվածի իմպլեմենտացիայի առումով բախվում են ներպետական օրենսդրության և հատկապես քրեաիրավական ոլորտում հակասությունների կապված մեղքի և պատասխանատվության ինստիտուտների հետ: Ինչպես գիտենք քրեական պատասխանատվության ենթարկելու կարևորագույն պայմաններից մեկը մեղքի առկայությունն

է, որպէս անձի հոգեբանական վերաբերմունք իր կողմից կատարվող հանրորեն վտանգավոր կոնկրետ արարքի և դրա հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ, որը դրսևորվում է դիտավորության կամ անգոյշության ձևով և որում դրսևորվում է անձի արարքի հակասոցիալական բնույթը: Ասվածից ելնելով հասկանում ենք, որ իրավաբանական անձին մեղքը վերագրելի չէ քրեական պատասխանատվության ենթարկելու համար: Սակայն նշենք, որ այն երկրներում, հատկապէս Անգլիայում, որտեղ օրենքը թույլ է տալիս քրեական պատասխանատվության ենթարկել իրավաբանական անձանց, ենթադրվում է, որ իրավաբանական անձի մեղքը նույնականացվում է տվյալ իրավաբանական անձի ղեկավարների կամ ներկայացուցիչների մեղավոր վարքագծին: Անգլիայում, այն կոչվել է «նույնականացման սկզբունք (իդենտիֆիկացիա)»: Դրա էությունը կայանում է նրանում, որ այդ գործողությունը (կամ անգործությունը) և հոգեկան վիճակը ընկերության ղեկավարների կամ ներկայացուցիչների ընկալվում է որպէս տվյալ ընկերության գործողությունը (կամ անգործությունը) և հոգեկան վիճակ:

Հարկ է նշել, որ վերոնշյալ ինստիտուտը նախատեսվում է ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծով, սակայն դեռևս հայտնի չէ այն կներդրվի ներպետական օրենսդրության մեջ, թե՛ ոչ: Բացի այդ, տեսական գրականության մեջ նշվում է, որ այն երկրները, որոնք ունենք առանձին վարչական դատարաններ և վարչական դատավարություն, ինչպէս օրինակ Գերմանիայում է, ցանկալի է նախատեսել վարչական պատասխանատվություն, ոչ թե՛ քրեական: Բացի այդ, ՀՀ նոր քրեական օրենսգրքով նախատեսված պատասխանատվության միջոցների ցանկը, ի տարբերություն միջազգային փորձի, շատ սպառիչ է՝ տուգանք, որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցում, լուծարում և ՀՀ-ում գործունեություն իրականացնելու արգելք: 1988թ. Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի հանձնարարականի համաձայն՝ մի շարք պատիժներ են նախատեսված, և հիմնականում շեշտը դրված է կանխարգելիչ պատիժների վրա, ոչ թե՛ ընկերությունների տնտեսական ոչնչացման: Բացի այդ, պետք է պատժի համաչափության սկզբունքը պահպանել: Ուսումնասիրելով միջազգային փորձը՝ տեսնում ենք, որ առաջարկվող օրենսդրական փոփոխությունները չեն ընդգրկում այնպիսի այլընտրանքային պատիժներ, ինչպիսիք են՝ վարչական հսկողության ենթարկումը (Ալբանիա) կամ դատական հսկողության ենթարկումը (Ֆրանսիա՝ մինչև 5 տարի ժամկետով): Եթե իրավաբանական անձը կոռուպցիոն հանցագործության պատճառով է ենթարկվում իրավաբանական պատասխանատվության, ապա պատիժ է նախատեսվում նաև պետական գնումներին գործընթացին մասնակցության զրկումը:

Այս ինստիտուտի ամրագրումը ևս կհանդիսանա զսպիչ մեխանիզմ կոռուպցիոն հանցագործություններից ընկերություններին զերծ պահելու համար:

11) Հարկ է նշել, որ կոռուպցիայի վերացման և արդյունավետ և տեսանելի բարեփոխումների իրականացման համար այդ բարեփոխումների մշակման ընթացքում գործադիր իշխանությունն ակտիվորեն չի համագործակցում և քննարկումներին մասնակից չի դարձնում մասնագիտական փորձառություն ունեցող ՔՀԿ-ներին և բիզնես ոլորտի ներկայացուցիչներին:

Առաջարկ 11. ՔՀԿ-ներին և բիզնես ոլորտի ներկայացուցիչներին մասնակից դարձնել ոչ միայն մաքսային ոլորտում օրենսդրական բարեփոխումների իրականացման գործընթացին, այլև ցանկացած այլ ոլորտային նորմատիվ իրավական ակտերի, մասնավորապէս՝ կառավարության որոշումների, հակակոռուպցիոն ռազմավարությունների և դրանց

միջոցառումների ծրագրերի մշակմանը, քանի որ վերջիններս կարող են վեր հանել ոլորտում առկա պրակտիկ խնդիրները և առաջարկել լուծումներ:

12) Խնդիր բարձրացվեց, որ առկա է անհրաժեշտություն առ այն, որ առավել սեղմ ժամկետներում ներկայացվեն 2015-2018թթ հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրերի հաշվետվությունները:

Առաջարկ 12. Հրապարակել հաշվետվություններ առնվազն 6 ամսվա պարբերությամբ, որպեսզի քաղաքացիները տեղեկացվեն, թե ի՞նչ առաջընթաց է լինում՝ ռազմավարության իրականացման առումով:

13) Ներկայումս բազմաթիվ պաշտոնատար անձինք «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ գույքի և եկամուտների հայտարարագրեր ներկայացնելու պահանջները պատշաճ կերպով չեն կատարում, քանի որ ձեռնարկատիրական գործունեությամբ են զբաղվում և իրավաբանական անձանց սեփականատերեր են հանդիսանում: Պատճառը կայանում է նրանում, որ առկա չեն խիստ պատասխանատվության միջոցներ, որոնք հետ կպահեն պաշտոնատար անձանց խախտումներ կատարելուց:

Առաջարկ 13. Կատարելագործել հայտարարագրման վերաբերյալ օրենսդրությունը, որպեսզի պաշտոնատար անձինք խիստ պատասխանատվության ենթարկվեն թերի և սխալ տվյալներ հայտարարագրելու ներառելու համար:

Ծանոթագրություն.

Ներկա պահին հայտարարագրման պարտականությունները չկատարելու համար վարչական և քրեական պատասխանատվության նախագիծ գտնվում է ԱԾ-ում:

14) ՀՀ օրենսդրությամբ հանրային ծառայողների էթիկայի կանոններ սահմանված են մի շարք իրավական ակտերով: Դրանք են՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենք, ՀՀ դատական օրենսգիրք, «Դատավորի վարքագծի կանոններ», «Դատախազի վարքագծի կանոնագիրք» և այլն:

Բացի այդ, միասնական կանոնակարգման ենթարկված չէ իրավաբանական պատասխանատվությունը էթիկայի կանոնների խախտման համար, ինչպես նաև հանրային ծառայողների պաշտոնների անձնագրերում սահմանված չէ էթիկայի կանոններին հետևելու պահանջ:

Ներկայումս ՀՀ օրենսդրությամբ գործում են մի շարք հանձնաժողովների, որոնց գործունեության հիմնական ուղղությունը էթիկայի կանոնների պահպանումն է: Դրանք են՝ ՀՀ ԱԾ էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողովը, ՀՀ ԲՊԱ էթիկայի հանձնաժողովը, ՀՀ ՄԴ էթիկայի հանձնաժողովը, ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը, ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովը, Գործադիր իշխանության հանրապետական և տարածքային մարմիններում գործող էթիկայի հանձնաժողովներ, ՏԻՄ-երում գործող էթիկայի հանձնաժողովներ:

Առաջարկ 14. Ստեղծել հանրային ծառայողների էթիկայի միասնական կանոնագիրք, կանոնակարգել և սահմանել միասնական իրավաբանական պատասխանատվությունը էթիկայի կանոնների խախտման համար, ինչպես նաև հանրային ծառայողների պաշտոնների անձնագրերում սահմանվել էթիկայի կանոններին հետևելու պահանջ:

Ծանոթագրություն.

ՀՀ-ն 2007 թվականի մարտից հանդիսանում է ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի մասնակից պետություն: Սույն կոնվենցիայի 8-րդ հոդվածը նախատեսում է, որ *յուրաքանչյուր մասնակից պետություն պետք է ունենա պաշտոնատար անձանց վարքագծի կանոնագիրք:*

Կոնվենցիայի 2-րդ մասը սահմանում է որ *յուրաքանչյուր մասնակից պետություն պետք է ձգտի իր ենթակառուցվածքային և իրավական համակարգերի շրջանակներում կիրառել վարքագծի կանոնագրքեր և ստանդարտներ պետական գործառույթների ճշգրիտ, բարեխիղճ և պատշաճ իրականացման համար*: Կոնվենցիայի 3-րդ մասը սահմանում է որ *Սույն հոդվածի դրույթների իրականացման նպատակներով յուրաքանչյուր մասնակից պետություն, համապատասխան դեպքերում և իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է նկատի ունենա տարածաշրջանային, միջտարածաշրջանային և բազմակողմ կազմակերպությունների համապատասխան նախաձեռնությունները, օրինակ՝ Գլխավոր վեհաժողովի 1996 թ. դեկտեմբերի 12-ի 51/59 բանաձևին կից հավելվածում պարունակվող՝ Պաշտոնատար անձանց վարքագծի միջազգային կանոնագիրքը*:

Կոնվենցիայի սույն հոդվածով սահմանվում է նաև, որ *յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է քննարկի այն պաշտոնատար անձանց նկատմամբ կարգապահական կամ այլ միջոցներ կիրառելու հնարավորությունը, ովքեր խախտում են սույն հոդվածին համապատասխան սահմանված վարքագծի կանոնագրքերը կամ ստանդարտները*:

Առաջարկ 15. Ստեղծել մեկ միասնական էթիկայի հանձնաժողով, որը կունենա բավարար լծակներ և կվերահսկի մնացած էթիկայի հանձնաժողովների գործունեությունը:

Ծանոթագրություն.

Հարկ է նշել, որ ստեղծվելիք հակակոռուպցիոն անկախ մարմինն, իր կանխարգելիչ գործառույթների իրականացնելիս, կհանդիսանա որպես վերահսկիչ մարմին մնացած էթիկայի հանձնաժողովների գործունեության նկատմամբ:

15) Բացակայում են ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունների վերաբերելի դրույթների իմպլեմենտացման արդյունավետության, ինչպես նաև վերոնշյալ ոլորտներում իրականացված բարեփոխումների ստուգման մեխանիզմներ:

Առաջարկ 15. Վերոնշյալ ոլորտներում իրականացված բարեփոխումների, ինչպես նաև ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունների իմպլեմենտացման արդյունավետության ստուգելու նպատակով առաջարկվում է ուսումնասիրել վերոնշյալի գնահատման համակարգի միջազգային փորձը և վերջինիս լույսի ներքո ներդնել համապատասխան գնահատման համակարգեր, որի միջոցով հնարավոր կլինի որոշել կատարված բարեփոխումների արդյունավետության աստիճանը և բարեփոխումներից հետո մնացած թերությունները: